



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ 07(321) 13.04.2017թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

<b>ԶՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>		
<b>ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐԸ</b>		
42	«Սահմանադրական բարեփոխումների գործընթացի կազմակերպման մասին» ԼՂՀ Նախագահի ՆՀ-24-Ա հրամանագիրը.....	3
43	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2008 թվականի մայիսի 14-ի ՆՀ-62 հրամանագրում փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ Նախագահի ՆՀ-25-Ն հրամանագիրը....	9
<b>ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>		
<b>ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b>		
44	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 26-ի N 918-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 121-Ն որոշումը.....	10
45	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով փոխադրումների կազմակերպման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության N 153-Ն որոշումը.....	11
46	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 28-ի N 713 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 180-Ն որոշումը.....	16
47	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 187-Ն որոշումը.....	17
48	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 188-Ն որոշումը.....	18
49	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 189-Ն որոշումը.....	19
50	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 190-Ն որոշումը.....	20
51	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 191-Ն որոշումը.....	21
52	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 192-Ն որոշումը.....	22
53	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 865-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 201-Ն որոշումը.....	23

54	«Պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող «Արցախագազ» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված զուտ շահույթից պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի չափը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության N 202-Ն որոշումը.....	26
55	«Աշխատանքային օրը տեղափոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 217-Ն որոշումը.....	27
56	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի N 911-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 233-Ն որոշումը.....	28
	<b>ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ</b>	
57	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավա-ստության առաջին ատյանի դատարանի դատավոր Դավիթ Ավանեսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին» ԼՂՀ արդարադատության խորհրդի N ԱԽ-1-Ո-1 որոշումը և հատուկ կարծիքը.....	29
	<b>ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ</b>	
58	ԼՂՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ 1937/02/16թ. որոշումը.....	52

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ելնելով 2017 թվականի փետրվարի 20-ի հանրաքվեով ընդունված Արցախի Հանրապետության Սահմանադրության դրույթների ամբողջական կենսագործման, ընդունման ենթակա իրավական ակտերի շրջանակի հստակեցման, դրանց մշակման գործընթացի համակարգման անհրաժեշտությունից,

կարևորելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սահմանադրական բարեփոխումների իրականացման գործընթացի պատշաճ կազմակերպումը,

ղեկավարվելով 2006 թվականի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության 61-րդ հոդվածով, 68-րդ հոդվածի 10-րդ կետով և 69-րդ հոդվածով՝ **ո ր ո շ ու մ ե մ**.

1. Ստեղծել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների համակարգման խորհուրդ (այսուհետ՝ Համակարգման խորհուրդ):

2. Հաստատել՝

1) Համակարգման խորհրդի անհատական կազմը՝ համաձայն հավելված 1-ի.

2) Համակարգման խորհրդի գործունեության կարգը՝ համաձայն հավելված 2-ի.

3) Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետ՝ Սահմանադրություն) անվանականորեն սահմանված և ընդունման կամ փոփոխման ենթակա օրենքների ցանկը՝ համաձայն հավելված 3-ի:

3. Համակարգման խորհրդին՝

1) ապահովել սույն հրամանագրի 3-րդ հավելվածում նշված օրենքների նախագծերի մշակումը և դրանք սահմանված կարգով և ժամկետներում Ազգային ժողով ներկայացնելը.

2) քննարկել և երկամսյա ժամկետում հաստատել Սահմանադրության՝ օրենքով կարգավորման պահանջ ուղղակիորեն նախատեսող դրույթների հիման վրա ընդունման կամ փոփոխման ենթակա օրենքների ցանկը, ապահովել դրանց նախագծերի մշակումը և դրանք սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել Հանրապետության նախագահին.

3) քննարկել և եռամսյա ժամկետում հաստատել Սահմանադրության ընդունմամբ պայմանավորված՝ ընդունման կամ փոփոխման ենթակա՝ սույն հրամանագրի մեջ չնշված այլ օրենքների ցանկը, ապահովել դրանց նախագծերի մշակումը և դրանք սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել Հանրապետության նախագահին.

4) սույն կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի պահանջների կատարումն ապահովել մինչև Սահմանադրության բոլոր դրույթների ուժի մեջ մտնելը:

4. Սույն հրամանագրի 3-րդ հավելվածում նշված օրենքների ցանկի 4-րդ պտունակում առաջինը հիշատակված մարմինը տվյալ օրենքի նախագիծը (նախագծերի փաթեթը) մշակելու համար հիմնական պատասխանատուն է: Սյունակում նշված մյուս մարմինը հիմնական պատասխանատու մարմին կարող է ներկայացնել առաջարկություններ, առարկություններ և անհրաժեշտ նյութեր՝ հիմնական պատասխանատու մարմնի կողմից համապատասխան

օրենքների նախագծերը (նախագծերի փաթեթը) սահմանված կարգով և ժամկետներում մշակելու և իրավասու պետական մարմին ներկայացնելու նպատակով:

5. Սույն հրամանագրի 3-րդ հավելվածում նշված օրենքների ցանկի 1-ին կետում հիշատակված օրենքի նախագիծը մշակման փուլում ենթակա է քննարկման՝ դատական իշխանության ինքնակառավարման մարմինների հետ:

6. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Բ.ՄԱՀԱԿՅԱՆ**

2017թ. մարտի 31  
Ստեփանակերտ  
ՆՀ-24-Ա

**Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Ջ Մ**  
**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԱՌՇՆԹԵՐ**  
**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՅՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

<b>Մաքատ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ</b>	Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավար (Համակարգման խորհրդի նախագահ)
<b>Նարինե ՆԱՐԻՄԱՆՅԱՆ</b>	Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի նախագահ (համաձայնությամբ)
<b>Արթուր ՄՈՄԻՅԱՆ</b>	Լեոնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազ (համաձայնությամբ)
<b>Արարատ ԴԱՆԻԵԼՅԱՆ</b>	Լեոնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարար
<b>Լևոն ԳՐԻԳՈՐՅԱՆ</b>	Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
<b>Հովիկ ԶԻՎԱՆՅԱՆ</b>	Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ (համաձայնությամբ)
<b>Էմիլ ԲԱԲԱՅԱՆ</b>	Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի խորհրդական
<b>Յուրի ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ</b>	Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի խորհրդական
<b>Լյուդմիլա ՖԱՐՍՅԱՆ</b>	Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի խորհրդական
<b>Արայիկ ԼԱԶԱՐՅԱՆ</b>	Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ
<b>Կարեն ԴԱՆԻԵԼՅԱՆ</b>	Լեոնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ
<b>Ժիրայր ՄԻՐԶՈՅԱՆ</b>	Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի տարածքային կառավարման և վերաբնակեցման վարչության պետ
<b>Լիա ԱՍՐՅԱՆ</b>	Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ
<b>Վրեժ ԺԱՍՂԱՐՅԱՆ</b>	Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի աշխատակազմի պետաիրավական վարչության իրավաբանական բաժնի վարիչ (Համակարգման խորհրդի քարտուղար):

Լեոնային Ղարաբաղի Հանրապետության  
Նախագահի աշխատակազմի ղեկավար՝

Մ.ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ

**Կ Ա Ր Գ**  
**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՊԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԱՌՆՆԹԵՐ**  
**ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ**  
**ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների համակարգման խորհրդի (այսուհետ՝ Համակարգման խորհուրդ) խնդիրները, գործառույթները և գործունեության կազմակերպման հիմունքները:

2. Համակարգման խորհրդի նախագահը և անդամները խորհրդի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով:

3. Համակարգման խորհուրդը գործում է մինչև Արցախի Հանրապետության Սահմանադրության բոլոր դրույթների ուժի մեջ մտնելը:

**2. ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

4. Համակարգման խորհրդի հիմնական խնդիրներն են՝ Սահմանադրության ընդունմամբ պայմանավորված՝ պետական և տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումների իրականացման, Սահմանադրությանը համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորման և Սահմանադրության կիրարկման ընթացքում առաջացած խնդիրներին լուծումներ տալու աշխատանքների համակարգումը:

5. Համակարգման խորհուրդը՝

1) քննարկում է Սահմանադրության դրույթների կիրարկման (ներառյալ՝ դրանցով նախատեսված պետական մարմինների ձևավորման) վերաբերյալ ու այլ տարաբնույթ հարցեր և առաջարկություններ՝ ներկայացնում Հանրապետության նախագահին:

2) քննարկում և հաստատում է Սահմանադրությամբ պայմանավորված՝ ընդունման կամ փոփոխման ենթակա օրենքների շրջանակը և հսկում պատասխանատուների կողմից այդ օրենքների նախագծերի մշակման և ընթացքավորման գործընթացը:

3) իր առջև դրված խնդիրները իրականացնելու նպատակով կարող է ստեղծել աշխատանքային խմբեր՝ ըստ առանձին ոլորտների:

4) իր աշխատանքներում կարող է ներգրավել մասնագետների, ստանալ մասնագիտական կարծիքներ:

5) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահին պարբերաբար ներկայացնում է հաղորդումներ՝ իր գործունեության վերաբերյալ:

6) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից և պաշտոնատար անձանցից կարող է ստանալ իր գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվություն:

7) հաստատում է իր նիստերի օրակարգը:

**3. ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

6. Համակարգման խորհուրդը ղեկավարում է Համակարգման խորհրդի նախագահը:

7. Համակարգման խորհրդի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով: Նիստերը գումարվում են Համակարգման խորհրդի նախագահի նախաձեռնությամբ՝ ըստ անհրաժեշտության:

8. Նիստը վարում է Համակարգման խորհրդի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ Համակարգման խորհրդի անդամներից մեկը: Նիստն իրավագոր է, եթե ներկա է անդամների կեսից ավելին:

9. Համակարգման խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստերի արձանագրումն ապահովում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի աշխատակազմը (այսուհետ՝ աշխատակազմ): Արձանագրությունը ստորագրում են նիստը նախագահողը և աշխատակազմի՝ նիստն արձանագրող ներկայացուցիչը:

10. Համակարգման խորհրդի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:

11. Եթե Համակարգման խորհրդի որևէ անդամ Համակարգման խորհրդի որոշման վերաբերյալ ունի հատուկ կարծիք, ապա այն գրավոր կցվում է նիստի արձանագրությանը:

12. Համակարգման խորհրդի հրավերով նիստին կարող են ներկա գտնվել այլ անձինք:

13. Համակարգման խորհրդի բնականոն գործունեությունն ապահովում է աշխատակազմը:

**Լեոնային Ղարաբաղի Հանրապետության  
Նախագահի աշխատակազմի ղեկավար՝**

**Մ.ՄՈՒՄԱՅԵԼՅԱՆ**

**Ց Ա Ն Կ**  
**ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՎԱՆԱԿԱՆՈՐԵՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԵՎ**  
**ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՍ ՓՈՓՈԽՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՕՐԵՆՔՆԵՐԻ**

Հ/Հ	Սահմանա- դրության հոդվածը	Օրենքի անվանումը	Օրենքի նախագծի մշակմանը և ներկայացմանը մասնակ- ցող պատասխանատու մարմինները	Օրենքի նախագիծը ԼՂՀ Ազգային ժո- ղովի քննարկմանը ներկայացնելու վերջնաժամկետը
1.	167-րդ հոդվածի 2-րդ մաս	Դատական օրենսգիրք	ԼՂՀ արդարադատության նախարարություն	2017թ. հուլիսի 1
2.	167-րդ հոդվածի 2-րդ մաս	Հաշվեքննիչ պալատի մա- սին օրենք	ԼՂՀ արդարադատության նախարարություն, ԼՂՀ վերահսկիչ պալատ (համաձայնությամբ)	2017թ. հուլիսի 1
3.	167-րդ հոդվածի 3-րդ մաս	Ազգային ժողովի կա- նոնակարգ	ԼՂՀ Ազգային ժողովի աշխատանքային խումբ (համաձայնությամբ), ԼՂՀ արդարադատության նախարարություն	2017թ. ապրիլի 20

**Լեոնային Ղարաբաղի Հանրապետության  
Նախագահի աշխատակազմի ղեկավար՝**

**Մ.ՍՈՒՄԱՅԵԼՅԱՆ**



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ  
ՄԱՅԻՄԻ 14-Ի ՆՀ-62 ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասը՝ **ո ր ո շ ու մ եմ.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2008 թվականի  
մայիսի 14-ի «Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու,  
պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով  
անկախ հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը  
սահմանելու մասին» ՆՀ-62 հրամանագրի 2-րդ կետով հաստատված  
հանձնաժողովի կազմում 6-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

**«Գրիգորի Աբրահամյան**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
կառավարությանն առընթեր Լեռնային Ղա-  
րաբաղի Հանրապետության ոստիկանության  
քրեակատարողական վարչության պետ»:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման  
պահից:

**Բ.ՄԱՀԱԿՅԱՆ**

2017թ. ապրիլի 13  
Ստեփանակերտ  
ՆՀ-25-Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 918-Ն ՈՐՈՇՄԱՆ  
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ս ք ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ջեռուցման օրերի առավելագույն քանակ սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 24-ի N 765-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 918-Ն որոշման 1<sup>1</sup>-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1<sup>1</sup>. Սահմանել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի, Շահումյանի շրջաններում և Ստեփանակերտում, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու, Հադրութի և Քաշաթաղի շրջանների՝ սույն որոշման հավելվածում նշված և չնշված բնակավայրերում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների հիմնարկների ջեռուցման օրերի առավելագույն քանակ՝ անկախ ջեռուցման համար օգտագործվող էներգիայի աղբյուրից

1) Ստեփանակերտ՝ տարեկան 158 օր.

2) Շուշիի շրջան՝ տարեկան 173 օր.

3) Շահումյանի շրջան՝ տարեկան 167 օր.

4) Ասկերանի շրջան՝ հավելվածում նշված և չնշված բնակավայրերում՝ տարեկան 153 օր.

5) Մարտակերտի շրջան՝ հավելվածում նշված բնակավայրերում՝ տարեկան 150 օր, հավելվածում չնշված բնակավայրերում՝ տարեկան 142 օր.

6) Մարտունու շրջան՝ հավելվածում նշված և չնշված բնակավայրերում՝ տարեկան 157 օր.

7) Հադրութի շրջան՝ հավելվածում նշված և չնշված բնակավայրերում՝ տարեկան 158 օր.

8) Քաշաթաղի շրջան՝ հավելվածում նշված բնակավայրերում՝ տարեկան 153 օր, հավելվածում չնշված բնակավայրերում՝ տարեկան 137 օր.»:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2016 թվականի հոկտեմբերի 20-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ  
ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՍԻ ԱՎՏՈՄՈՒԲԻԼՆԵՐՈՎ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ռ ր ո շ ու մ է**:

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով փոխադրումների կազմակերպման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**Կ Ա Ր Պ**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՄԻ  
ԱՎՏՈՄՈՒԲԻԼՆԵՐՈՎ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորների և ուղեբեռների փոխադրումների կազմակերպման պայմանները և կարգավորվում դրա հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի գործողությունը տարածվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով և (կամ) մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորների և ուղեբեռների փոխադրում (այսուհետ՝ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրում) իրականացնող կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և (կամ) ֆիզիկական անձանց (այսուհետ՝ փոխադրող) վրա:

3. Սույն կարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **կարգավորվող տաքսի կայանատեղ**՝ ուղևորների նստեցման կամ իջեցման և մարդատար տաքսի ավտոմոբիլների կայանման համար նախատեսված ճանապարհի երթևեկելի մասին սահմանակից տարածք (երթևեկելի մասի լայնացման տեղամասեր, մերձակա տարածքներ և այլն), որը կահավորված է համապատասխան ճանապարհային նշաններով և գծանշումով, տեղեկատվական ցուցանակով և երթակարգավարական կետով.

2) **չկարգավորվող տաքսի կայանատեղ**՝ ճանապարհի երթևեկելի մասին զուգահեռ՝ աջ եզրին կամ երթևեկելի մասին սահմանակից, համապատասխան ճանապարհային նշաններով և գծանշումով կահավորված տարածք.

3) **սակաչափիչ (տաքսամետր)**՝ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորի և ուղեբեռի փոխադրման դիմաց գանձվող արժեքը որոշող սարք, ելնելով տրանսպորտային միջոցի կատարած վազքի և ավտոմոբիլի սպասման մեջ գտնվելու ժամանակի միավորից:

**II. ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՄԻ ԱՎՏՈՄՈՒԲԻԼՈՎ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ  
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

4. Մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումներն իրականացվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված հրապարակային պայմանագրին ներկայացվող պահանջների հիման վրա, որը համարվում է բանավոր եղանակով կնքված պատվիրատուի (ուղևորի) և փոխադրողի միջև՝ մարդատար-տաքսի ավտոմոբիլի վարորդի կամ փոխադրողի կողմից պատվերի ընդունման պահից:

5. Պատվիրատուն պատվերն իրականացնում է օգտագործելով կապի տարբեր միջոցներ կամ անմիջական մասնակցությամբ զբաղեցնում է ազատ մարդատար-տաքսի ավտոմոբիլը.

1) կարգավորվող և չկարգավորվող տաքսի կայանատեղերում.

2) ճանապարհափողոցային ցանցի տարբեր կետերում, որտեղ թույլատրվում է տրանսպորտային միջոցի կանգառ:

6. Կարգավորվող տաքսի կայանատեղում պատվերների ընդունումը կազմակերպում է հերթապահ-երթակարգավարը:

7. Քաղաքային նշանակության ճանապարհափողոցային ցանցում մարդատար-տաքսի ավտոմոբիլների կայանումը թույլատրվում է միայն կարգավորվող կամ չկարգավորվող տաքսի կայանատեղերում:

8. Մարդատար-տաքսի ավտոմոբիլի արտաքին և ներքին կահավորվածությունը ներկայացվող պահանջները սահմանված են «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով:

9. Պատվերների ընդունման, ավտոմոբիլների մատուցման կարգը և փոխադրման սակագները սահմանում են փոխադրողները, որոնց վերաբերյալ տեղեկությունները գրանցվում են փոխադրողի կողմից վարվող գրանցամատյանում:

**III. ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ  
ԵՎ ՓՈՆԱԴՐԱՎԱՐՁԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

10. Փոխադրման երթուղին որոշում է պատվիրատուն, իսկ երթուղի չնշվելու կամ նշված երթուղով երթնելության սահմանափակումների առկայության դեպքերում փոխադրողը պարտավոր է երթուղին ընտրել ճանապարհային ցանցի ամենակարճ ուղեգծով:

11. Ուղևորների նստեցումն ու իջեցումն իրականացվում են մայթի կամ կողնակի կողմից, իսկ դրա անհնարինության դեպքում՝ վարորդի հրահանգով ձախ կողմից ապահովելով երթնելության անվտանգությունը:

12. Մարդատար-տաքսի ավտոմոբիլի ուղեսրահում արգելվում է տեղափոխել այնպիսի տեսակի իրեր (ձեռքի ծանրոց), որոնք կարող են վնասել կամ աղտոտել նստատեղերը կամ խոչընդոտ հանդիսանալ վարորդին տրանսպորտային միջոցի ղեկավարմանը կամ հետին տեսանելիության հայելիներից օգտվելուն:

13. Մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների ժամանակ արգելվում է.

1) ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի օգտագործումը և ծխելը ուղեսրահում.

2) նստատեղերի քանակից ավելի ուղևորների տեղափոխումը, ուղևորների կողմից դռների բացումն ու ապակիների իջեցումը՝ առանց վարորդի համաձայնության.

3) պայթյունավտանգ, հրդեհավտանգ, ռադիոակտիվ, քիմիական քայքայիչ նյութերի, ավտոտրանսպորտային միջոցը և ուղևորների հագուստն աղտոտող կամ վնասող նյութերի և իրերի, տհաճ, սուր հոտ ունեցող իրերի, տրանսպորտային միջոցի արտադրող գործարանի կողմից սահմանված թույլատրելի չափերն ու քաշերը գերազանցող ուղեբեռների, օրենքով արգելված այլ նյութերի և իրերի փոխադրումը:

14. Պատվերի և ուղևորության համար վճարումը կատարվում է կանխիկ, իսկ փոխադարձ համաձայնության դեպքում անկանխիկ եղանակներով՝ սակաչափիչի ցուցմունքի հիման վրա:

15. Փոխադրողը պարտավոր է պատվիրատուի պահանջով տրամադրել փոխադրավարձի վճարումը հավաստող փաստաթուղթ: Փոխադրավարձի վճարումը հավաստող փաստաթղթին ներկայացվող պարտադիր վավերապայմանները սահմանված են սույն կարգի N 1 ձևում:

**IV. ՓՈՆԱԴՐՈՂԻ ԵՎ ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

16. Փոխադրողը պարտավոր է ապահովել.

1) ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական և վարորդների առողջական վիճակների ամենօրյա զննման աշխատանքների իրականացումը և այդ աշխատանքների հաշվառումը.

2) սանիտարական ու տեխնիկական նորմերին համապատասխանող տրանսպորտային միջոցների մատուցումը և վարորդների պատշաճ արտաքին տեսքով ներկայացումը.

3) տրանսպորտային միջոցում ուղեբեռի տեղավորման ու բեռնաթափման աշխատանքներին աջակցության ցուցաբերումը՝ վարորդի միջոցով.

4) մոռացված իրերի պահպանումն ու վերադարձը ուղևորին.

5) սույն կարգի 13-րդ կետում նշված պահանջների կատարումը:

17. Փոխադրողն իրավունք ունի հրաժարվել ուղևորափոխադրում իրականացնելուց կամ դադարեցնել փոխադրումը, եթե

1) ուղևորը գտնվում է ոգելից խմիչքի, թմրամիջոցների կամ հոգեմետ այլ նյութերի ազդեցության ներքո, որոնք կարող են խոչընդոտել տրանսպորտային միջոցի ղեկավարմանը կամ վտանգ ստեղծել ճանապարհային երթնելության մասնակիցների համար, կամ ուղևորի կողմից խախտվել են սույն կարգի 13-րդ կետով սահմանված պահանջները.

2) ուղևորը տառապում է Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 3-ի N 207 որոշմամբ հաստատված հիվանդություններից որևէ մեկով:

18. Ուղևորը պարտավոր է.

1) հետևել ավտովարորդի հրահանգներին՝ տրանսպորտային միջոցը նստելու, իջնելու և ուղեբեռի տեղավորման ընթացքում.

2) վճարել սակաչափիչով հաշվարկված վճարը.

3) պահպանել սույն կարգի 13-րդ կետում նշված պահանջները:

19. Ուղևորն իրավունք ունի.

1) իր հետ տեղափոխել տրանսպորտային միջոցի արտադրող գործարանի կողմից սահմանված թույլատրելի չափերին ու քաշերին համապատասխան ձեռքի ծանրոց և ուղեբեռ.

2) զբաղեցված մարդատար-տաքսի ավտոմոբիլն օգտագործել իր կողմից նախապես նշված ուղեգծով ու պայմաններով.

3) հրաժարվել ուղևորությունից, եթե փոխադրողը չի մատուցել ուղևորի կողմից պահանջված տեսակին համապատասխանող տրանսպորտային միջոց:

20. Փոխադրողի և ուղևորի պարտականություններն ու իրավունքները սահմանված են՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Տրանսպորտի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով, «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով, «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

**Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՄԻ ԱՎՏՈՄՈՔԻԼՈՎ ՈՒՂԵՎՈՐԱՓՈՒՄԱԴՐՈՒՄՆԵՐԻ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒՄԱԴՐԱՎԱՐՁԻ ՎՃԱՐՈՒՄԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻՆ  
ՆԵՐԿԱՑԱՑՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐ**

1. Մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման փոխադրավարձի վճարումը հավաստող փաստաթղթի մեջ պետք է ներառվեն հետևյալ պարտադիր պայմանները.

- 1) փաստաթղթի անվանումը, սերիան և համարը.
- 2) փոխադրողի անվանումը կամ անուն, ազգանունը.
- 3) փաստաթղթի տրամադրման ամսաթիվը.
- 4) փոխադրման ամսաթիվը, սակաչափիչի ցուցմունքը և փոխադրավարձը.
- 5) փաստաթուղթը տրամադրող անձի անուն, ազգանուն և ստորագրությունը:

2. Փաստաթղթի անվանումը, սերիան և համարը դաշտում կատարվում է «ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՄԻ ԱՎՏՈՄՈՔԻԼՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ ԱՆԴՈՐՐԱԳԻՐ» նշումը, սերիան \_\_\_\_\_, համարը \_\_\_\_\_:

3. Փոխադրողի անվանումը դաշտում նշվում են փոխադրողի իրավաբանական անվանումը, հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը և հեռախոսահամարը:

4. Փոխադրավարձը նշվում է թվերով ու տառերով, ընդ որում, սպասելավարձը (առկայության դեպքում) նշվում է առանձին տողով:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 մարտի 2017թ.

N 180-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 713 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների և մոտոտրանսպորտի վառելիքի, յուղերի ու քսուքների ծախսի, ավտոդողերի վազքի և կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետների նորմաները սահմանելու մասին» N 713 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշմամբ սահմանված N 1 հավելվածի աղյուսակ N 1-ը.

ա. «ГАЗ-2705 2.4» տողից հետո լրացնել նոր տողով.

« 

ГАЗ-2834 VX	22.4
-------------	------

 ».

բ. «YA3-33039» տողից հետո լրացնել նոր տողով.

« 

YA3-374195	19.4
------------	------

 ».

գ. «Mercedes Benz 316 CDI Sprinter» տողից հետո լրացնել նոր տողով.

« 

Mercedes Benz Sprinter 324 2.1 TD	17.9 դիզելային վառելիք
-----------------------------------	------------------------

 ».

դ. «Opel Astra» տողից հետո լրացնել նոր տողով.

« 

Opel Frontera 2.2	14.0
-------------------	------

 ».

ե. «Toyota Land Cruiser 200 4.0 Gas» տողից հետո լրացնել նոր տողով.

« 

Toyota Land Cruiser 200 4.6 Gas	23.7
---------------------------------	------

 »:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 մարտի 2017թ.

N 187-Ն

ք.Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 1-ի N 589 որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Բերքաձորի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության 0,1 հեկտար այլ հողերը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ արդյունաբերական օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 180 որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Վազգենաշենի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 2,6837 հեկտար արոտը փոխադրել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ ընդերքի օգտագործման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 21-ի N 638 որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վերին Հոռաթաղի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության 0,9738 հեկտար հասարակական կառուցապատման հողերը փոխադրել գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ վարելահողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **առաջում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 148 որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղրութի շրջանի Մարիամաձորի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 2,38 հեկտար այլ հողատեսքերը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ոքոշում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղրութի շրջանի Մեծ Թաղերի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող

1) համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 9,5 հեկտար արոտավայրը, համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2) համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության 13,26 հեկտար այլ հողերը, համաձայն հավելվածի, փոխադրել գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ վարելահողի:

3) պետական սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության 2,4 հեկտար թփուտը, համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 186 որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի Շուշիի քաղաքային համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում՝ «Իսահակի աղբյուր» կոչվող տեղամասում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության 2,66278 հեկտար անտառը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 մարտի 2017թ.

N 201-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ԲՅՈՒՋԵՆՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ  
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասին, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ ու մ է**.

1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի N 1 հավելվածում կատարել վերաբաշխում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 865-Ն որոշման N 2 հավելվածի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ.դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՄԵՐ</b>	-	-	-	-
			այդ թվում՝				
<b>04</b>			<b>ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	20 000,0	-	-	-
	<b>7</b>		Այլ բնագավառներ	20 000,0	-	-	-
		2	Հյուրանոցներ և հասարակական սննդի օբյեկտներ	20 000,0	-	-	-
		01	Պատվիրակությունների ընդունելություններ	20 000,0	-	-	-
			ԼՂՀ կառավարության աշխատակազմ	20 000,0	-	-	-
<b>06</b>			<b>ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՍՏՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	-	-	-	-
	<b>3</b>		Ջրամատակարարում	-	-	-	-
		1	Ջրամատակարարում	-	-	-	-
		01	Խմելու և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորում	-	-	-	-
			ԼՂՀ կառավարություն	(135 301,0)	(333 000,0)	(536 700,0)	(800 000,0)
			ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն	28 900,0	71 400,0	113 900,0	170 000,0
			ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն	40 000,0	100 000,0	160 000,0	240 000,0
			Ստեփանակերտի քաղաքապետարան	10 200,0	25 200,0	40 200,0	60 000,0
			Շուշիի շրջանի վարչակազմ	5 100,0	12 600,0	20 100,0	30 000,0
			Քաշաթաղի շրջանի վարչակազմ	51 101,0	123 800,0	202 500,0	300 000,0
<b>11</b>			<b>ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՉՂԱՍՎՈՂ ԾԱԽՄԵՐ</b>	(20 000,0)	-	-	-
	<b>1</b>		ԼՂՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդեր	(20 000,0)	-	-	-
		1	ԼՂՀ կառավարության պահուստային ֆոնդ	(20 000,0)	-	-	-
		01	ԼՂՀ կառավարության պահուստային ֆոնդ	(20 000,0)	-	-	-
			ԼՂՀ կառավարություն	(20 000,0)	-	-	-
	<b>2</b>		Այլ ծախսեր	-	-	-	-
		1	Այլ ծրագրեր	-	-	-	-
		02	Կապիտալ ներդրումներ	-	-	-	-
			ԼՂՀ կառավարություն	(1 890 000,0)	(3 520 000,0)	(7 050 000,0)	(11 700 000,0)



			ԼՂՀ պաշտպանության նախարարություն	-	15 000,0	30 000,0	50 000,0
			ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն	1 826 700,0	3 357 000,0	6 740 000,0	11 300 000,0
			Ստեփանակերտի քաղաքապետարան	40 000,0	100 000,0	200 000,0	250 000,0
			Ասկերանի շրջանի վարչակազմ	3 000,0	6 000,0	12 000,0	15 000,0
			Հադրութի շրջանի վարչակազմ	3 000,0	9 000,0	12 000,0	15 000,0
			Մարտակերտի շրջանի վարչակազմ	3 000,0	6 000,0	12 000,0	15 000,0
			Մարտունու շրջանի վարչակազմ	3 000,0	6 000,0	12 000,0	15 000,0
			Շահումյանի շրջանի վարչակազմ	3 000,0	4 000,0	8 000,0	10 000,0
			Շուշիի շրջանի վարչակազմ	3 000,0	4 000,0	8 000,0	10 000,0
			Քաշաթաղի շրջանի վարչակազմ	5 300,0	13 000,0	16 000,0	20 000,0

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

**Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ  
«ԱՐՑԱԽԳԱԶ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ  
ՖԻՆԱՆՍԱՏՆԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ  
ՋՈՒՏ ՇԱՀՈՒՑԹԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 28-ի N 165 որոշման 2-րդ կետի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***ն ր ո շ ու մ է***.

1. Հաստատել պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող «ԱՐՑԱԽԳԱԶ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ընկերություն) 2016 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված 136 153 700 ՀՀ դրամ գուտ շահույթից պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասի դիմաց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի չափը՝ 81 692 220 ՀՀ դրամ:

2. Հանձնարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարին՝

1) ապահովել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի օրենսդրությամբ սահմանված կարգով վճարումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե.

2) պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասի դիմաց ընկերության տրամադրության տակ թողնված գուտ շահույթի 40 տոկոսն ուղղել ներդրումների իրականացմանը:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ ամենամսյա տեղեկություններ ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն պետական բյուջե վճարված շահութաբաժնի մասին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 ապրիլի 2017թ.

N 217-Ն

ք.Ստեփանակերտ

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածը և «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. 2017 թվականի ապրիլի 17-ի աշխատանքային օրը տեղափոխել 2017 թվականի մայիսի 6-ը՝ շաբաթ օրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 911-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **առաջում է**։

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամ հիմնադրելու մասին» N 911-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) 3-րդ կետի նախադասության վերջում դնել վերջակետ.

2) 7-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 7.1-ին կետով.

«7.1 Սույն կանոնադրությամբ համալսարանի կառավարմանը և ուսումնական գործընթացի կազմակերպմանը մասնակցում են «Հայաստանի ազգային ազրարային համալսարան» հիմնադրամի ներկայացուցիչներ»։

3) 11-րդ կետի 1-ին ենթակետում, 41-րդ կետի 9-րդ և 11-րդ ենթակետերում, 47-րդ և 60-րդ կետերում «հիմնադրամ» բառը բոլոր հոլովածներով փոխարինել «համալսարան» բառի համապատասխան հոլովածներով.

4) 15-րդ կետի «Համալսարանը» բառը փոխարինել «Համալսարանի» բառով, իսկ «հաստատություն» բառը՝ «հաստատության» բառով.

5) 23-րդ կետի «20» թիվը փոխարինել «25» թվով.

6) 24-րդ, 25-րդ և 26-րդ կետերի «25 տոկոսը» բառերը փոխարինել «20 տոկոսը» բառերով.

7) 26-րդ կետի «Համալսարանի» բառը փոխարինել «Հիմնադրի» բառով.

8) 27-րդ կետի «25 տոկոսը» բառերը փոխարինել «40 տոկոսը, որի 70 տոկոսը՝ «Հայաստանի ազգային ազրարային համալսարան» հիմնադրամի ներկայացուցիչներ» բառերով.

9) 46-րդ կետի 2-րդ ենթակետում «Ռեկտոր» բառից հետո լրացնել «պաշտոնի» բառը.

10) 49-րդ կետի «50 տոկոսը» բառերից հետո լրացնել «, գիտական խորհրդի անդամների թվի 10 տոկոսը ներկայացվում է «Հայաստանի ազգային ազրարային համալսարան» հիմնադրամի կողմից» բառերով.

11) 136-րդ կետի 13-րդ ենթակետի վերջում միջակետը փոխարինել վերջակետով.

12) 137-րդ կետի 5-րդ ենթակետում «Վճարովի» բառը փոխարինել «վճարովի» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

№ ԱԽ-1-Ո-1  
2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԴԱՎԻԹ  
ՎԱՆԵՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ  
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ  
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ

նախագահությամբ՝	Ն.Նարինյանի,
մասնակցությամբ՝ ԱԽ անդամներ	Մ.Ավանեսյանի, Ս.Արզումանյանի, Գ.Գրիգորյանի, Ա.Լազարյանի, Հ.Խաչատրյանի, Շ.Հայրապետյանի, Կ. Մաղյանի, Ա.Մառաջյանի, Մ.Ստեփանյանի,
ԼՂՀ արդարադատության նախարար	Ա.Դանիելյանի
դատավոր	Դ.Ավանեսյանի,
քարտուղարությամբ՝	Ս.Ավետիսյանի

2017 թվականի մարտի 20-ին ԼՂՀ Գերագույն դատարանի նստավայրում, դռնբաց նիստում, քննարկելով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի /այսուհետ նան՝ Դատարան/ դատավոր **Դավիթ Ավանեսյանին** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

**1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը.**

ԼՂՀ արդարադատության նախարարի 2017թ. հունվարի 24-ի հրամանով Դատարանի դատավոր Դավիթ Ավանեսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել ԼՂՀ գլխավոր դատախազի 2016թ. դեկտեմբերի 30-ի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին հաղորդումը՝ հասցեագրված ԼՂՀ արդարադատության նախարարին:

**2. Կարգապահական խախտման վերաբերյալ ԼՂՀ արդարադատության նախարարի եզրակացությունը.**

ԼՂՀ արդարադատության նախարարը 2017թ. մարտի 6-ին ԼՂՀ արդարադատության խորհրդին /այսուհետ նան՝ Արդարադատության խորհուրդ/ է ներկայացրել միջնորդություն՝ Դատարանի դատավոր Դ.Ավանեսյանին արդարադատություն իրականացնելիս նյութական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ թույլ տալու համար, որոնք կատարվել են կոպիտ անփութությամբ, կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին: Միջնորդությանը կցվել է Դատարանի դատավոր Դ.Ավանեսյանի կարգապահական խախտման վերաբերյալ ԼՂՀ արդարադատության նախարարի եզրակացությունը:

Ըստ եզրակացության՝

**«2. Գործի փաստական հանգամանքները.**

1. ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (դատավոր Դ.Ավանեսյան) 28.07.2016թ. դատավճռով Հայկ Ղարիբի Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հանցավոր արարքը կատարելու մեջ և նրա նկատմամբ նշանակվել է պատիժ՝ ազատազրկում 2(երկու) տարի 6(վեց) ամիս ժամկետով: Հ.Հակոբյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, փոխվել է կալանավորմամբ՝ մինչև նրա մասով դատավճռի կատարումը:

Ըստ դատավճռի՝ «...ամբաստանյալ Հայկ Հակոբյանը ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2014թ. հունիսի 26-ի դատավճռով իր նկատմամբ տուգանքի ձևով նշանակված պատիժը չի կրել, ...»: Դատարանը նաև փաստել է, որ «ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցավոր արարքը դասվում է դիտավորությամբ կատարվող միջին ծանրության հանցագործությունների շարքին և այն համապատասխանում է ԼՂՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներին: Այսպիսով, հաշվի առնելով, որ ամբաստանյալ Հայկ Հակոբյանը դիտավորությամբ կատարված հանցագործության համար ունի դատվածություն և սույն քրեական գործով մեղադրվում է դիտավորյալ միջին ծանրության հանցագործություն կատարելու մեջ, Դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Հայկ Հակոբյանին մեղսագրվող արարքը ԼՂՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով ռեցիդիվ է»:

2. Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի պետ Լ.Ավետիսյանի 01.09.2016թ. թիվ Ե 40/16-Ա-183 գրության՝ Հայկ Հակոբյանի նկատմամբ ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի ՏԴ/0035/01/14 քրեական գործով 26.06.2014թ. դատավճռով որպես պատիժ նշանակված 1.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամի չափով տուգանքից վերջինս վճարել է միայն 100.000 ՀՀ դրամ, և տուգանքը գտնվում է կատարման փուլում:

3. ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2016թ. օգոստոսի 29-ի որոշմամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ԼՂՀ Ազգային ժողովի 2016թ. օգոստոսի 25-ի թիվ Ն-098-6 որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ, Հայկ Հակոբյանին ազատել է Դատարանի 2016թ. հուլիսի 28-ի դատավճռով նշանակված պատժից:

Դատարանի որոշմամբ արձանագրվել է, որ «...սույն քրեական գործում բացակայում են Համաներման որոշման մեջ նշված այն սահմանափակումները, որոնք կարող են արգելք հանդիսանալ ամբաստանյալների նկատմամբ Համաներման որոշման կիրառման համար»:

4. 2016թ. սեպտեմբերի 09-ին նշված որոշման դեմ ԼՂՀ Ասկերանի շրջանի դատախազը բերել է վերաքննիչ բողոք:

5. ԼՂՀ վերաքննիչ դատարանը 2016թ. դեկտեմբերի 13-ին կայացրել է ամբաստանյալ Հ.Հակոբյանի նկատմամբ հետախուզում հայտատարելու մասին որոշում, իսկ նույն օրը՝ մեկ այլ որոշմամբ, ԸԻԴ 0052/01/16 քրեական գործի վարույթը՝ ամբաստանյալ Հ.Հակոբյանի մասով, կասեցվել է՝ մինչև կասեցնելու հիմք ծառայած հանգամանքների վերանայլը:

6. 2017թ. փետրվարի 03-ին ԼՂՀ վերաքննիչ դատարան է մուտք գործել ԼՂՀ Ասկերանի շրջանի դատախազության 2017թ. փետրվարի 03-ի թիվ 151014.16 գրությունը, ըստ որի՝ սույն քրեական գործով հետախուզման մեջ գտնվող ամբաստանյալ Հայկ Հակոբյանը հայտնաբերվել և 2017թ. հունվարի 31-ին ձերբակալվել է:

7. ԼՂՀ վերաքննիչ դատարանի 08.02.2017թ. որոշմամբ, ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի ԸԻԴ 0052/01/16 քրեական գործով 2016 թվականի օգոստոսի 29-ի որոշումը՝ ԼՂՀ Ազգային ժողովի 2016թ. օգոստոսի 25-ին ընդունված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

անկախության հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» թիվ Ն-098-6 որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ Հայկ Հակոբյանին ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2016 թվականի հուլիսի 28-ի դատավճռով ԼՂՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով 2/երկու/ տարի 6/վեց/ ամիս ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատժից ազատելու և նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը վերացնելու մասով բեկանվել է:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը, մասնավորապես, արձանագրել է, որ «Դատարանը, Հայկ Հակոբյանի նկատմամբ 2016թ. օգոստոսի 29-ին «Համաներման ակտի կիրառման հարցը քննության առնելու մասին» որոշում է կայացրել Համաներման որոշման 9-րդ կետի 3-րդ ենթակետի խախտմամբ, ուստի, նշված որոշումը՝ Հայկ Հակոբյանի մասով, ենթակա է բեկանման»:

### **3. Դատավորի կողմից նյութական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ թույլ տալը.**

Գտնում եմ, որ արդարադատություն իրականացնելիս ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Դավիթ Ռաֆայելի Ավանեսյանը «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ԼՂՀ Ազգային ժողովի 2016թ. օգոստոսի 25-ի թիվ Ն-098-6 որոշումը սխալ կիրառելով և Հայկ Ղարիբի Հակոբյանին Դատարանի 2016թ. հուլիսի 28-ի դատավճռով նշանակված պատժից ազատելով, թույլ է տվել նյութական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտում:

Մասնավորապես, համաձայն «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ԼՂՀ Ազգային ժողովի 2016թ. օգոստոսի 25-ի թիվ Ն-098-6 որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի՝ պատժից ազատման են ենթակա, բացառությամբ նույն որոշման 8-րդ կետի 4-6-րդ ենթակետերի և 9-րդ կետով նախատեսված դեպքերի՝ այն անձինք, որոնց նկատմամբ նշանակվել է առավելագույնը երեք տարի ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պատիժ:

Նույն որոշման 9-րդ կետի 3-րդ ենթակետը սահմանում է, որ՝ «Համաներումը չկիրառել» (...)

3) այն անձանց նկատմամբ, որոնք նախնական կալանքի տակ գտնվելու կամ պատիժը կրելու ընթացքում սույն որոշման կիրառման օրվա դրությամբ կարող են մեղադրվել կամ մեղադրվում են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են կրկին դիտավորյալ հանցագործության կատարման համար...»:

Վերոգրյալից հետևում է, որ օրենսդիրը բացառել է նախկինում դիտավորյալ հանցագործություն կատարելու համար պատիժ կրող այն անձանց նկատմամբ համաներման ակտի կիրառումը, որոնք նշված որոշման կիրառման օրվա դրությամբ կարող են մեղադրվել կամ մեղադրվում են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

Ինչպես երևում է ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 28.07.2016թ. դատավճռից և ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի պետի 01.09.2016թ. թիվ Ե 40/16-Ա-183 գրությունից՝ Համաներման ակտի կիրառման օրվա դրությամբ Հայկ Հակոբյանը համարվում էր նախկինում դիտավորյալ հանցագործություն կատարելու համար պատիժ կրող անձ և ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 28.07.2016թ. դատավճռով դատապարտված էր կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

Այսինքն՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու

մասին» ԼՂՀ Ազգային ժողովի 2016թ. օգոստոսի 25-ի թիվ Ն-098-6 որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետը, ինչպես նաև Համաներման ակտը, ընդհանրապես, Հայկ Հակոբյանի նկատմամբ ենթակա չի եղել կիրառման:

Մինչդեռ, դատավորն անտեսել է համաներում կիրառելու վերը նշված հստակ սահմանափակումը, և Դատարանի 2016թ. օգոստոսի 29-ի որոշմամբ Հայկ Ղարիբի Հակոբյանն ազատվել է Դատարանի 2016թ. հուլիսի 28-ի դատավճռով նշանակված պատժից: Հետևաբար՝ հանցագործություն կատարած անձի նկատմամբ պատշաճ արդարադատություն չի իրականացվել, և նա ապօրինի ազատվել է պատժի կրումից և արդարացի հատուցում չի ստացել իր կատարած արարքի համար:

Արդյունքում թույլ է տրվել նյութական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2016թ. օգոստոսի 29-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել ԼՂՀ Ասկերանի շրջանի դատախազը: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 08.02.2017թ. որոշմամբ բողոքը բավարարվել է և դատական ակտը Հայկ Հակոբյանին պատժից ազատելու և նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը վերացնելու մասով բեկանվել՝ արձանագրելով, որ «Դատարանը, Հայկ Հակոբյանի նկատմամբ 2016թ. օգոստոսի 29-ին «Համաներման ակտի կիրառման հարցը քննության առնելու մասին» որոշում է կայացրել Համաներման որոշման 9-րդ կետի 3-րդ ենթակետի խախտմամբ, ուստի, նշված որոշումը՝ Հայկ Հակոբյանի մասով, ենթակա է բեկանման»:

Հարկ է նշել նաև, որ ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2016թ. սեպտեմբերի 26-ի և դրան հաջորդող նիստերին (բացառությամբ 2016թ. նոյեմբերի 22-ի նիստի) Հայկ Հակոբյանը չի ներկայացել, որի պատճառով ԼՂՀ վերաքննիչ դատարանը կայացրել է նրան բերման ենթարկելու, նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու, իսկ 2016թ. դեկտեմբերի 13-ին՝ նաև նրա նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին որոշումներ: Հայկ Հակոբյանը հայտնաբերվել և ձերբակալվել է 2017թ. հունվարի 31-ին:

### **Եզրակացություն**

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավոր Դավիթ Ռաֆայելի Ավանեսյանը, արդարադատություն իրականացնելիս թույլ է տվել նյութական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ, որում առկա է դատավորի մեղքը:

Ակնհայտ և կոպիտ է դատավոր Դ.Ավանեսյանի կողմից՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ԼՂՀ Ազգային ժողովի 2016թ. օգոստոսի 25-ի թիվ Ն-098-6 որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի սխալ կիրառումը, անտեսելով նույն որոշման 9-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված սահմանափակումը, որի արդյունքում հանցագործություն կատարած անձի նկատմամբ պատշաճ արդարադատություն չի իրականացվել, և նա ապօրինի ազատվել է պատժի կրումից:

Գտնում եմ, որ այն դատական ակտը, որը պարունակում է նյութական իրավունքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտում, չի կարող կայացվել դատավորի մեղքի բացակայությամբ: Տվյալ պարագայում դատավորի մեղավորությունն առկա է, քանի որ նա սխալ է կիրառել նյութական իրավունքի նորմը, չի կատարել վերը նշված նորմերից բխող և դատարանի կողմից կատարման ենթակա պահանջները, չի դրսևորել բավարար ուշադրություն և շրջահայացություն, որի արդյունքում չեն պահպանվել արդարության և օրինականության սկզբունքները և թույլ են տրվել նյութական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ:

Գտնում եմ, որ նշված նյութական նորմերի խախտումները չեն կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով, անհամատեղելի են դատավորի բարձր կոչման հետ, ինչպես նաև կատարված են կոպիտ անփութությամբ, քանի որ գործի փաստական



հանգամանքներից հստակ է, որ դատավորը տվյալ իրադրությունում կարող էր և պարտավոր էր կանխատեսել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:

Գտնում եմ, որ վերոնշյալ հանգամանքները ԼՂՀ դատական օրենսգրքի 101-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ուժով հիմք են ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Դավիթ Ռաֆայելի Ավանեսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար»:

**3. Դատավորի բացատրություններում և պատասխանում բերված փաստարկները ԼՂՀ արդարադատության նախարարի հարուցած կարգապահական վարույթի վերաբերյալ.**

Դատավոր Դ.Ավանեսյանը 2017թ. փետրվարի 01-ին ԼՂՀ արդարադատության նախարարին ներկայացրել է բացատրություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ես՝ Դավիթ Ռաֆայելի Ավանեսյանս, ԼՂՀ գլխավոր դատախազի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին առ 30.12.2016թ. հաղորդման հիման վրա ԼՂՀ արդարադատության նախարարի առ 24.01.2017թ. թիվ 93գ հրամանով հարուցված կարգապահական վարույթի կապակցությամբ, տալիս եմ սույն բացատրությունն այն մասին, որ գտնում եմ, որ իմ կողմից արդարադատություն իրականացնելիս թույլ չեն տրվել նյութական և դատավարական նորմերի խախտումներ:

Նախ ցանկանում եմ անդրադառնալ հաղորդման մեջ նշված նյութական նորմի ակնհայտ և կոպիտ խախտման վերաբերյալ ենթադրությանը:

ԼՂՀ Սահմանադրության 1-ին հոդվածը հռչակում է, որ ԼՂՀ ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություն է:

Համանման նորմ է պարունակում, ինչպես Հայաստանի, այնպես էլ Բելառուսի, Ուկրաինայի, Թուրքմենստանի և մի շարք այլ հանրապետությունների սահմանադրությունների 1-ին հոդվածը:

ԼՂՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ ԼՂՀ տարածքում քրեական գործերով վարույթի կարգը սահմանվում է ԼՂՀ Սահմանադրությամբ, ԼՂՀ միջազգային պայմանագրերով, սույն օրենսգրքով, ԼՂՀ դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով:

Իսկ նույն օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել ԼՂՀ Սահմանադրությունը, սույն օրենսգրքը և մյուս օրենքները:

Վկայակոչված նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դատարանը պարտավոր է պահպանել ԼՂՀ Սահմանադրությունը, քրեական դատավարության օրենսգրքը և մյուս օրենքները:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի «Օտարերկրյա պետությունների դատարանների դատավճիռների ճանաչումը ԼՂՀ տարածքում և դրա իրավական հետևանքները» վերտառությամբ 58-րդ գլխի 529-րդ հոդվածի համաձայն՝

1. ԼՂՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա պետությունների դատարանների դատավճիռները ենթակա են ճանաչման ԼՂՀ-ում:

2. Օտարերկրյա պետությունների դատարանների դատավճիռների՝ ԼՂՀ-ում ճանաչելու հիմքերը, ճանաչման ենթակա դատավճիռների (որոշումների) տեսակները սահմանվում են տվյալ պետության հետ կնքված կամ նրա մասնակցությամբ գործող ԼՂՀ միջազգային պայմանագրով: (...):

Մեջբերված քրեադատավարական նորմը սահմանում է ԼՂՀ օտարերկրյա պետությունների դատարանների դատավճիռների (որոշումների) ճանաչման իրավական ընթացակարգը: ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 529-րդ հոդվածը, մասնավորապես, նախատեսում է, որ ԼՂՀ-ում օտարերկրյա պետությունների դատարանների դատավճիռներն ենթակա են ճանաչման բացառապես միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում: Օտարերկրյա պետության հետ կնքված կամ նրա մասնակցությամբ գործող ԼՂՀ միջազգային պայմանագրով են նախատեսվում դատավճիռների ճանաչման հիմքերը և ճանաչման ենթակա դատական ակտերի տեսակները:

Իսկ ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 531-րդ հոդվածը սահմանում է, որ օտարերկրյա պետության դատարանի դատավճիռի ճանաչումը ԼՂՀ տարածքում առաջացնում է նույն իրավաբանական հետևանքները, ինչ կառաջացնեն ԼՂՀ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը:

Ակնհայտ փաստ է, որ ԼՂՀ Սահմանադրությունը, քրեական դատավարության օրենսգրքը և մյուս օրենքները չեն պարունակում որևէ նորմ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կսահմաներ, որ ԼՂՀ տարածքում ՀՀ դատարանների օրինական ուժի մեջ մտած դատավճիռներն (որոշումներն) առաջացնում են նույն իրավաբանական հետևանքներն, որոնք առաջացնում են ԼՂՀ դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռները (որոշումները):

«Միջազգային պայմանագրերի մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝

1. ԼՂՀ միջպետական պայմանագրով կարող են կարգավորվել ցանկացած հարաբերություններ, որոնք համապետական նշանակություն ունեն և այդ իմաստով կարող են առնչվել ինչպես կառավարության, մեկ կամ ավելի գերատեսչության, այնպես էլ պետական այլ մարմինների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների հետ:

2. Անկախ սույն հոդվածի 1-ին մասի դրույթից, ԼՂՀ միջպետական պայմանագրով են կարգավորվում՝ (...)

2) քաղաքացիական, ընտանեկան, քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների հաստատման, ինչպես նաև հանձնման հետ կապված հարաբերությունները. (...):

Քանի որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը Հայաստանի Հանրապետության հետ չունի կնքված «քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» միջպետական համաձայնագիր կամ միջազգային պայմանագիր կամ էլ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագիր, գտնում եմ, որ Հայաստանի Հանրապետության դատարանների օրինական ուժի մեջ մտած դատավճիռներն (որոշումներն) չեն առաջացնում նույն իրավաբանական հետևանքները, որոնք առաջացնում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռները (որոշումները):

Նշեմ նաև, որ այդ համոզմունքն իմ մոտ առաջացել է «ԼՂՀ անկախության հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ԼՂՀ Ազգային ժողովի 2016թ. օգոստոսի 25-ի թիվ Ն-098-6 որոշման (այսուհետ՝ նաև Համաներման որոշում) բովանդակությանը ծանոթանալուց և այնտեղ առկա մի շարք ձևակերպումների լույսի ներքո: Մասնավորապես, Համաներման որոշման 2-րդ կետի 5-րդ ենթակետում նշված է՝ «Պատժից ազատել (...) այն անձանց, որոնք Հայրենական մեծ պատերազմի, Աֆղանստանի պատերազմի, ՀՀ կամ ԼՂՀ պաշտպանության համար մղված մարտական գործողությունների մասնակիցներ են (...): Կամ 12-րդ կետի 2-րդ ենթակետում նշված է «Սույն որոշման կատարումը վերապահել՝ (...) ԼՂՀ Գերագույն դատարանին՝ ԼՂՀ դատարանների կողմից դատապարտված այն անձանց նկատմամբ, որոնք պատիժը կրում են ԼՂՀ սահմաններից դուրս»:

Նաև կարող եմ ավելացնել, որ իմ այդ համոզմունքը վերջնականապես ամրապնդվել է, երբ ԼՂՀ Գերագույն դատարանը քննել և լուծում է տվել ՀՀ ԱՆ

պրոբացիոն ծառայության միջնորդությունները ԼՂՀ դատարանների կողմից դատապարտված և ՀՀ տարածքում պատիժ կրող անձանց նկատմամբ Համաներման որոշումը կիրառելու վերաբերյալ:

Ինչպես հետևում է ՇԻԴ/0052/01/16 քրեական գործի նյութերից 2016թ. օգոստոսի 29-ի դրությամբ Հայկ Հակոբյանի նկատմամբ Համաներման որոշումը կիրառելու համար տվյալ որոշմամբ նախատեսված սահմանափակումները, այդ թվում Համաներման որոշման 9-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված սահմանափակումը, չեն եղել, քանի որ Հայկ Հակոբյանը տվյալ գործով մեղսագրված արարքը չի կատարել (...) ԼՂՀ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով կամ ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ճանաչված այլ հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով նշանակված պատժի կրման ընթացքում:

Հետևաբար, Համաներման ակտի կիրառման հարցը քննության առնելու մասին, 2016թ. օգոստոսի 29-ին իմ կողմից կայացված որոշմամբ չեն խախտվել Համաներման որոշման 9-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները, այսինքն որևէ նյութական նորմ չի խախտվել:

Կարծում եմ, որ կարող է հարց առաջանալ, թե տվյալ դեպքում ինչու է իմ կողմից 2016թ. հուլիսի 28-ին կայացված դատավճռում արձանագրվել, որ Հայկ Հակոբյանի արարքում առկա է ռեցիդիվ, քանի որ նա ՏԴ/0035/01/14 դատավճռով ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2014թ. հունիսի 26-ի դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդվածով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործությունը կատարելու համար դատապարտվել է տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով և նշանակված տուգանքն ամբողջությամբ չի վճարել:

Այդ կապակցությամբ հայտում եմ, որ մինչև տվյալ դատավճիռը կայացնելն իմ մոտ այն համոզմունքն է եղել, որ ՀՀ դատարանների կողմից դատապարտված անձի նկատմամբ պետք է կիրառվեն ռեցիդիվի կանոնները, որը կապված է եղել արդեն իսկ տարիներ շարունակ ձևավորված պրակտիկայով, նաև այն հանգամանքով, որ խորհրդային միության փլուզումից հետո այդ պրակտիկան շարունակվել է, ինչպես նաև այն հանգամանքով, որ ԼՂՀ-ում կիրարկման մեջ էին դրվել ՀՀ քրեական դատավարության և քրեական օրենսգրքերը, սակայն 2009 և 2013 թվականներին ԼՂՀ-ում ընդունվել են համապատասխանաբար քրեական դատավարության և քրեական օրենսգրքերը, որոնց իրավակարգավորումներն որոշ առումով տարբերվում են ՀՀ համանուն օրենսգրքերից: Որպես օրինակ կարող եմ նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասը, որը վերաբերվում է նշանակված տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելուն, ՀՀ Սահմանադրական դատարանի որոշմամբ մասնակիորեն ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր, իսկ ԼՂՀ քրեական օրենսգրքի նույն հարաբերությունները կարգավորող 50-րդ հոդվածի 4-րդ մասը պարունակում է այն նույն ձևակերպումը, որը ՀՀ Սահմանադրական դատարանը մասնակիորեն ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր:

Բացի այդ, ՀՀ Սահմանադրական դատարանի տվյալ որոշումից հետո ՀՀ իրավակիրառ պրակտիկայում ստեղծվել է մի այնպիսի իրավիճակ, ըստ որի դատապարտյալի կողմից տուգանքի չվճարման դեպքում այն հանրային աշխատանքներով փոխարինելու միջնորդություններ չեն ներկայացվում դատարաններ, այսինքն՝ տուգանքի վճարումը թողնվում է դատապարտյալի հայեցողությանը, իսկ ԼՂՀ-ում գործում է ճիշտ հակառակ պրակտիկան:

ԼՂՀ քրեական օրենսգրքը նախատեսում է տուգանքի հետաձգման կամ տարաժամկետման հնարավորությունն առավելագույնը մեկ տարի ժամկետով: Իսկ քրեակատարողական օրենսգրքով սահմանված է, որ դատապարտյալը պարտավոր է դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո անհապաղ և ամբողջությամբ վճարել դատական ակտով որպես տուգանք նշանակված գումարը՝ վճարման անդորրագիրը տասն աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելով տարածքային մարմին:

Նշվածներից հետևում է, որ դատապարտյալը նշանակված տուգանքը պարտավոր է դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո անհապաղ և ամբողջությամբ վճարել, իսկ եթե այն հետաձգվել է, ապա այդ ժամկետն ավարտելուց անմիջապես հետո:

Տուգանքի տարածակետման դեպքում նախատեսված է այլ կարգ, ըստ որի, եթե դատապարտյալը խախտում է տուգանքի վճարման ժամանակացույցով սահմանված պարտավորությունների կատարումը, ապա տվյալ արտոնությունը դատարանի որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվում և տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը փոխարինվում է հանրային աշխատանքներով:

Ինչպես հետևում է հաղորդմանը կից ներկայացված գրությունից՝ Հայկ Հակոբյանի նկատմամբ նշանակված 1.000.000 ՀՀ դրամ գումարի չափով տուգանքի վճարումը ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2014թ. դեկտեմբերի 09-ի որոշմամբ տարածակետվել է 1 տարի ժամկետով, և նա միայն 05.02.2015թ. է կատարել 100.000 ՀՀ դրամ գումարի չափով տուգանքի վճարում: Այսինքն, մինչև 2016թ. մայիսի 08-ը, ինչու չէ նաև մինչև 2016թ. օգոստոսի 28-ը, իրավասու մարմինների կողմից միջոցներ չեն ձեռնարկվել տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով, իսկ այն ևս չկատարելու դեպքում՝ ազատագրկմամբ փոխարինելու վերաբերյալ: Տվյալ գրությունից հետևում է նաև, որ այդ ընթացքում Հայկ Հակոբյանը չի թաքնվել և նրա նկատմամբ հետախուզում չի հայտարարվել:

ԼՂՀ քրեակատարողական օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝

1. Տուգանքը չվճարելու դեպքում այն փոխարինվում է հանրային աշխատանքներով՝ ԼՂՀ քրեական օրենսգրքով սահմանված ժամկետով և կարգով:

2. Դատապարտյալի նկատմամբ դատավճռով նշանակված տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու նպատակով տարածքային մարմինը միջնորդություն է ներկայացնում դատարան: (...):

Իսկ ԼՂՀ քրեական օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ եթե դատապարտվողն ի վիճակի չէ անհապաղ և ամբողջությամբ վճարելու նշանակված տուգանքը, ապա դատարանը նրա համար վճարման ժամկետ է սահմանում առավելագույնը մեկ տարի ժամկետով կամ թույլատրում է տուգանքը մաս առ մաս վճարել նույն ժամկետում: Այդ դեպքում սահմանվում է տուգանքի վճարման ժամանակացույց և որոշվում է յուրաքանչյուր անգամ վճարման ենթակա գումարի չափը: Նշված արտոնությունը դատարանի որոշմամբ ուժը կորցնում է, եթե դատապարտյալը խախտում է տուգանքի վճարման ժամանակացույցով սահմանված պարտավորությունների կատարումը: Դատապարտյալի կողմից տուգանքի վճարման ժամանակացույցով սահմանված պարտավորությունների կատարումը խախտելու դեպքում տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը փոխարինվում է հանրային աշխատանքներով՝ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով:

Տվյալ կարգավորումների վերլուծությունը ցույց է տալիս, որ օրինական ուժի մեջ մտած դատավճռով նշանակված տուգանքը պետք է վճարվի անհապաղ, իսկ համապատասխան որոշման առկայության դեպքում՝ առավելագույնը մեկ տարվա ընթացքում, և այն սահմանված ժամկետում չկատարելու պարագայում, այդ պատժի տեսակը պետք է փոխարինվի մեկ այլ պատժի տեսակով:

Նույնիսկ, եթե հաշվենք, որ ՀՀ դատարանների օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը կիրառելի են ԼՂՀ-ում քրեական դատավարության կարգով քննվող գործերով, ապա տվյալ դեպքում նաև վերը նշված պատճառաբանություններով 2016թ. օգոստոսի 28-ին որոշում կայացնելու ժամանակ Հ.Հակոբյանը չի համարվել տուգանքի (նաև հանրային աշխատանքների կամ ազատագրկման) ձևով պատիժ կրող անձ:

Այժմ ցանկանում եմ անդրադառնալ հաղորդման մեջ նշված դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտման վերաբերյալ ենթադրությանը:

Նախ նշեմ, որ որոշման մեջ ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 324-րդ հոդվածի վերաբերյալ նշումը վրիպակ է և այն չի բխում որոշման ողջ

տրամաբանությունից, քանի որ որոշումից միանշանակ հետևում է, որ այն չի կայացվել դատական նիստում, նիստն անց է կացվել դռնբաց կամ դռնփակ, նիստին մասնակցել են կողմերը և այլն:

Ինչ վերաբերվում է, որ ես պարտավոր էի նիստ հրավիրելի և որոշում կայացնելի դատական նիստում, որը չկատարելով թույլ եմ տվել նյութական և դատավարական նորմերի ակնհայտ խախտումներ, ապա կասեմ հետևյալը, որ հաղորդման մեջ վկայակոչվել է ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 324-րդ հոդվածը, որի վերաբերյալ, արդեն իսկ նշեցի և ԼՂՀ քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը, ըստ որի քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելը հնարավոր է միայն ԼՂՀ քրեական օրենսգրքով նախատեսված հիմքերի և պայմանների առկայության դեպքում:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածը սահմանում է, որ հանցանք կատարած անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունվող Համաներման ակտով կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, (...):

Իսկ Համաներման որոշման 12-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված է, որ սույն որոշման կատարումը վերապահված է դատարաններին՝ ա. այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ (...) գործերը քննվել են, բայց դատավճիռներն օրինական ուժի մեջ չեն մտել:

ԼՂՀ քրեական օրենսգիրքը, քրեական դատավարության օրենսգիրքը և Համաներման որոշումը չեն պարունակում որևէ նորմ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կսահմաներ օրինական ուժի մեջ չմտած դատավճիռներով դատապարտված անձանց պատժից ազատելու հարցը քննարկելու համար դատական նիստ հրավիրելու և Համաներման որոշումը կիրառելու կապակցությամբ դատավարության մասնակիցների կարծիքը լսելու վերաբերյալ:

Ավելին, պատժից ազատելու հարցում, պատժից ազատման ենթակա անձի կարծիքը որևէ դեր չի խաղում, ի տարբերություն քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքերի, քանի որ այն կրում է իմպերատիվ բնույթ և անկախ այդ հարցի կապակցությամբ նրա կարծիքից, տվյալ անձը ենթակա է պատժից ազատման:

Ենթադրում եմ, որ հաղորդում ներկայացրած անձի մոտ պատժից ազատելու հարցը քննարկելու համար պարտադիր դատական նիստ հրավիրելու համոզմունքն առաջացել է իրավակիրառ պրակտիկայում քրեակատարողական տեսչության միջնորդությունների կապակցությամբ տվյալ հարցը դատական նիստում քննարկելու հանգամանքով, այնինչ քրեակատարողական տեսչության միջնորդությունները դասվում են դատական որոշման կատարման հետ կապված հարցերին, որի դեպքում դատական նիստ հրավիրելը հանդիսանում է պարտադիր նախապայման (ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 453-րդ հոդված), իսկ այդ միջնորդության հիման վրա պատժից ազատման ենթակա անձինք համարվում են դատապարտյալներ:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքից բխում է, որ օրինական ուժի մեջ չմտած դատավճռով դատապարտված անձը չի համարվում դատապարտյալ (ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մաս), հետևաբար նրա նկատմամբ կիրառելի չեն **դատական որոշման կատարման հետ կապված հարցերի քննության համար** ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 453-րդ հոդվածով սահմանված կանոնները: Այսինքն, այդ անձը չի կարող օգտվել ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 444-րդ հոդվածով դատապարտյալին վերապահված իրավունքներից:

Փորձեմ նաև իմ վերը նշված հիմնավորումները ներկայացնել պրակտիկ օրինակի տեսքով.

ԸԲԴ/0061/01/16 քրեական գործի քննությունը 2016թ. օգոստոսի 19-ին ավարտելով՝ անցել եմ խորհրդակցական սենյակ և դատավճռի հրապարակման օր հայտարարել 2016թ. օգոստոսի 29-ը:

2016թ. օգոստոսի 25-ին ընդունվել է Համաներման որոշումը, որը կիրառելի էր տվյալ գործով ամբաստանյալի նկատմամբ: Համաներման ակտի ընդունումը գործի դատաքննությունը վերսկսելու հիմք չի հանդիսանում: Մակայն գործով ի հայտ է եկել դատապարտվող անձին պատժից ազատելու հիմք, որը

չկատարելու դեպքում ես կխախտեի, ինչպես ԼՂՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածի պահանջները, այնպես էլ Համաներման որոշմամբ իմ վրա դրված պարտականությունը:

Բացի այդ, ես առանց դատական նիստ հրավիրելու ԸԻԴ/0046/01/16, ԸԻԴ/0050/01/16 և ԸԻԴ/0056/01/16 քրեական գործերով դատապարտված անձանց ազատել եմ պատժից, եթե դատախազությունում միանշանակ գտնում են, որ այդ հարցը կարող է լուծվել միայն դատական նիստում, ապա տվյալ դեպքում հարց է առաջանում, ինչու այդ գործերով կայացված որոշումները չեն բողոքարկվել վերադաս դատարան:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածը սահմանում է, որ հանցանք կատարած անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունվող Համաներման ակտով կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, իսկ դատապարտյալը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատժից, կամ պատժի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով, կամ կարող է վերացվել դատվածությունը:

Համաներման որոշման 12-րդ կետի համաձայն՝ «Սույն որոշման կատարումը վերապահել՝

1) Դատարաններին՝

ա. այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերը գտնվում են դատարաններում, սակայն մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը չեն քննվել, կամ այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ գործերը քննվել են, բայց դատավճիռներն օրինական ուժի մեջ չեն մտել,

բ. այն անձանց նկատմամբ, որոնց հանդեպ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, կամ պատժի կրումը հետաձգվել է: Նշված անձանց նկատմամբ սույն որոշման կիրառման հարցը լուծում է ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը՝ ԼՂՀ կառավարությանն առընթեր ԼՂՀ ռոտիկանության քրեակատարողական վարչության քրեակատարողական տեսչության (այսուհետ՝ քրեակատարողական տեսչություն) միջնորդության հիման վրա:

2) ԼՂՀ Գերագույն դատարանին՝ ԼՂՀ դատարանների կողմից դատապարտված այն անձանց նկատմամբ, որոնք պատիժը կրում են ԼՂՀ սահմաններից դուրս:

3) (...).

4) քրեակատարողական հիմնարկի պետին՝ այն անձանց նկատմամբ, որոնք պատիժը կրում են քրեակատարողական հիմնարկում:

5) քրեակատարողական տեսչության պետին՝ այն անձանց նկատմամբ, ովքեր

ա. դատապարտվել են ազատությունից զրկելու հետ չկապված պատժի,

բ. պատժից պայմանական վաղաժամկետ ազատվել են, և նրանց վարքագծի նկատմամբ իրականացվում է վերահսկողություն.»::

Իսկ Համաներման որոշման 13-րդ կետով սահմանված է, որ Համաներմում կիրառելու վերաբերյալ հետաքննության և նախաքննության մարմինների, քրեակատարողական հիմնարկների պետերի, քրեակատարողական տեսչության պետի ընդունած որոշումները հաստատում է դատախազը:

Տվյալ նորմերի ընդհանրացված վերլուծությունը ցույց է տալիս, որ հանցանք կատարած անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունված Համաներման ակտով կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից և պատժից համապատասխան մարմնի որոշման հիման վրա, իսկ որպես պարտադիր պայման հետաքննության և նախաքննության մարմինների, քրեակատարողական հիմնարկների պետերի, քրեակատարողական տեսչության պետի որոշումները պետք է հաստատվեն դատախազի կողմից, այսինքն՝ Համաներման որոշմամբ սահմանվել են Համաներման ակտի կիրառման ընթացակարգը և պայմանները, որոնց մեջ բացակայում է օրինական ուժի մեջ չմտած դատավճիռներով դատապարտված անձանց պատժից ազատելու հարցը դատական նիստում քննարկելու վերաբերյալ որևէ պարտադիր պայման:

Նույն Համաներման որոշմամբ տուգանքի դատապարտված անձանց պատժից ազատելու պարտականությունը վերապահվել է քրեակատարողա-

կան տեսչությանը, որը հնարավորինս սեղմ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան մինչև 2016թ. դեկտեմբերի 01-ը, պետք է որոշում կայացնի տուգանքի դատապարտված անձանց պատժից ազատելու մասին, և այն պետք է հաստատվի դատախազի կողմից:

Նշված փաստական հանգամանքից հետևում է, որ չնայած քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված է դատապարտյալներին պատժից ազատելու ընթացակարգ, այնուամենայնիվ օրենսդիրն իր որոշմամբ համաներման կիրառման համար սահմանել է հատուկ ընթացակարգ:

Հետևաբար, անտրամաբանական եմ համարում այն ենթադրությունը, երբ քրեակատարողական տեսչության պետը տուգանքի դատապարտված անձին պատժից ազատելու հարցը քննարկելու համար կայացնում է որոշում, իսկ դատարանն այդ հարցը քննարկելու համար պետք է նիստ հրավիրի:

Համաներման որոշման 12-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունից հետևում է, որ համաներման ակտը պետք է կիրառվի մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, իսկ ինչպես հետևում է տվյալ գործի փաստական հանգամանքներից, ամբաստանյալների կողմից վերաքննիչ բողոք չի բերվել և այն պետք էր օրինական ուժի մեջ մտնել 2016թ. օգոստոսի 30-ին: Ամբաստանյալներից երկուսը գտնվում (բնակվում) էին ՀՀ Կոտայքի մարզում, որոնց նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, իսկ Հայկ Հակոբյանը գտնվում էր ԼՂՀ ռուսիկանության ՔԿՎ քրեակատարողական վարչության քննչական մեկուսարանում: Համաներման որոշումը դատարան է մուտք գործել 07.09.2016թ., սակայն ես դրա մասին համացանցից տեղեկացվել էի 2016թ. օգոստոսի 26-ին, ժամը 14:00-ի սահմաններում, իսկ դրան հաջորդող 27-ը և 28-ը, ոչ աշխատանքային օրեր էին: Համաներման որոշման կատարումը կրում է իմպերատիվ բնույթ, և տվյալ գործով դատապարտյալներին պատժից չազատելու դեպքում ես թույլ կտայի նյութական նորմի կոպիտ խախտում: Հարց է առաջանում, երկու աշխատանքային օրում հնարավոր է արդյոք դատական նիստ հրավիրել և պատշաճ կարգով ծանուցել, ինչպես դատապարտված անձանց, նրանց պաշտպանին (կամ պաշտպաններին), այնպես էլ մեղադրողին և տուժողին:

Այդ ամենից բացի գտնում եմ, որ դատավճիռ կայացնելուց հետո, մինչև այն օրինական ուժի մեջ մտնելը, դատարանը իրավունք չունի դատական նիստ հրավիրել, անգամ եթե տվյալ դատական ակտը կայացնելիս թույլ են տրվել ակնհայտ կոպիտ խախտումներ:

Սակայն, միաժամանակ, պետք է արձանագրել, որ օրենսդիրը դատարանին իրավունք է վերապահել լուծել դատական ակտի ի կատար ածման ընթացքում ծագած կասկածները և անհստակությունները, մասնավորապես՝ հստակ որոշել հաշվարկվող պատժի չափը, եթե դատարանի դատավճռում այն սահմանված չէ, լուծել խափանման միջոցների, դատական ծախսերը վերաբաշխելու և իրեղեն ապացույցների ճակատագրի հարցը, եթե այն լուծված չի եղել կամ լուծված է եղել ոչ հստակ, մեկնաբանել իր որոշումների անհստակությունները: /Քր.դատ.օր 445h/: Չեմ կարծում, որ անգամ նշված հարցերը լուծելու կապակցությամբ դատարանը պետք է նիստ հրավիրի և լսի մեղադրողի կամ դատախազի կարծիքը:

Կարծում եմ, որ ԼՂՀ քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի մեջբերումը որևէ կերպ չի առնչվում դատական նիստ հրավիրելուն և դատական նիստում որոշում կայացնելուն, հետևաբար, չեմ տեսնում որևէ հիմք այն տվյալ հարցի համատեքստում դիտարկելու և դրա վերաբերյալ որևէ պարզաբանում տալու համար:

Ցանկանում եմ Ձեր ուշադրությունը հրավիրել նաև այն հանգամանքին, որ այն որոշումը, որը կայացնելով ըստ ԼՂՀ գլխավոր դատախազի, թույլ եմ տվել նյութական և դատավարական նորմերի ակնհայտ կոպիտ խախտումներ, բողոքարկվել է վերաքննության կարգով և դեռևս այդ որոշման կապակցությամբ վերջնական դատական ակտի չի կայացվել, այսինքն՝ այն չի բեկանվել և դեռևս պարզ չէ, թե տվյալ որոշումը նյութական կամ դատավարական նորմերի էական խախտմամբ է կայացվել, թե ոչ: Նույնիսկ

Եթե ԼՂՀ վերաքննիչ դատարանը գտնի, որ այդ որոշումը կայացնելիս իմ կողմից թույլ է տրվել նյութական կամ դատավարական նորմերի էական խախտումներ, այդ հանգամանքը ևս հիմք չի կարող հանդիսանալ ինձ կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար»:

Դատավոր Դ.Ավանեսյանը 2017թ. փետրվարի 23-ին ԼՂՀ արդարադատության նախարարին ներկայացրել է լրացուցիչ բացատրություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ես՝ Դատարանի դատավոր Դավիթ Ռաֆայելի Ավանեսյանս, ԼՂՀ արդարադատության նախարարի առ 21.02.2017թ. եզրակացության կապակցությամբ, տալիս եմ սույն (լրացուցիչ) բացատրությունն այն մասին, որ գտնում եմ, որ իմ կողմից արդարադատություն իրականացնելիս թույլ չի տրվել որևէ նյութական նորմի խախտում, առավել ևս ակնհայտ կոպիտ, ինչպես նշված է եզրակացությունում:

Եզրակացությունից ևս հետևում է, որ ԼՂՀ գլխավոր դատախազի հաղորդման մեջ նշված և կարգապահական վարույթ հարուցելու հիմքում դրված ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 324-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 1-ին մասի և ԼՂՀ քրեական օրենսգրքի 7-րդ ու 8-րդ հոդվածների նորմերի որևէ խախտումներ, իմ կողմից արդարադատություն իրականացնելիս թույլ չեն տրվել:

Այլ որպես իմ կողմից ենթադրաբար թույլ տրված նյութական նորմի ակնհայտ կոպիտ խախտում է նշվել «Լեոնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ԼՂՀ Ազգային ժողովի 2016թ. օգոստոսի 25-ի թիվ Ն-098-6 որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի սխալ կիրառումը, քանի որ իմ կողմից անտեսվել է նույն որոշման 9-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված սահմանափակումը, որի արդյունքում հանցագործություն կատարած անձի նկատմամբ պատշաճ արդարադատություն չի իրականացվել, և նա ապօրինի ազատվել է պատժի կրումից:

Իմ կողմից բարձրացված իրավական հարցի կապակցությամբ արձանագրվել է, որ /.../ ԼՂՀ և ՀՀ միջև իրավական հարաբերությունների առանձնահատկություններից էլնելով ձևավորված է այն պրակտիկան, որ քրեական գործերով դատական ակտերը փոխադարձ ճանաչվում են երկու պետությունների տարածքում՝ առանց քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ճանաչման ընթացակարգ անցնելու: Նշվածը վերաբերվում է նաև քաղաքացիական և վարչական գործերով կայացված դատական ակտերին:

Չեմ կարծում, որ իրավական պետությունում անձին քրեական պատասխանատվությունից ազատելուց հրաժարվելու հիմքում կարող է դրվել իրավական հարաբերությունների առանձնահատկություններով պայմանավորված ձևավորված պրակտիկան: Նաև գտնում եմ, որ հատկապես քրեական գործերով իրավական հարաբերությունները կարող են կարգավորվել միայն ու միայն միջպետական պայմանագրերով, հակառակ դեպքում կոպիտ կերպով կոտնահարվեն ԼՂՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի, ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի, նույն օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի և «Միջազգային պայմանագրերի մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջները:

«Միջազգային պայմանագրերի մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝

1. ԼՂՀ միջպետական պայմանագրով կարող են կարգավորվել ցանկացած հարաբերություններ, որոնք համապետական նշանակություն ունեն և այդ իմաստով կարող են առնչվել ինչպես կառավարության, մեկ կամ ավելի գերատեսչության, այնպես էլ պետական այլ մարմինների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների գործառնությունների հետ:

2. Անկախ սույն հոդվածի 1-ին մասի դրույթից, ԼՂՀ միջպետական պայմանագրով են կարգավորվում (...)



2) քաղաքացիական, ընտանեկան, քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների հաստատման, ինչպես նաև հանձնման հետ կապված հարաբերությունները (...):

Գտնում եմ, որ որևէ իրավական հարաբերությունների առանձնահատկություններով պայմանավորված ձևավորված պրակտիկան չի կարող հակասել ԼՂՀ Սահմանադրությանը և դրա կարգավորումներին համապատասխան ընդունված օրենքներին, մասնավորապես՝ ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի և «Միջազգային պայմանագրերի մասին» ԼՂՀ օրենքի իմպլեմենտիվ բնույթ կրող նորմերին:

Ի տարբերություն քաղաքացիաիրավական իրավահարաբերությունների՝ ԼՂՀ քրեական օրենսգիրքն արգելում է քրեական օրենքն անալոգիայով կիրառելը:

Փաստորեն ստացվում է այնպես, որ ես մեղադրվում եմ քրեական օրենքի անալոգիա չկիրառելու և օրենքի մեկնաբանության համար, այնինչ ԼՂՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ քրեական օրենքն անալոգիայով կիրառելն արգելվում է, իսկ ԼՂՀ դատական օրենսգրքի 101.2-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված է, որ արդարադատություն իրականացնելիս օրենքի մեկնաբանությունը, փաստերի և ապացույցների գնահատումն ինքնին չեն կարող հանգեցնել կարգապահական պատասխանատվության:

Գտնում եմ, որ դատավորին վերագրվող խախտումը չի կարող համարվել ակնհայտ և կոպիտ, եթե այն չի պարունակում ԼՂՀ Սահմանադրության կամ օրենքների նորմերի այնպիսի էական, անվիճելի և անհերքելի խախտումներ, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել անձանց՝ վերոհիշյալ իրավական ակտերով երաշխավորված իրավունքների և ազատությունների կոպիտ սահմանափակմանը, չհիմնավորված և չպատճառաբանված որոշման կայացմանը: Հետևաբար, իրավական հարաբերությունների առանձնահատկությունների հետ կապված ձևավորված պրակտիկային հակառակ, միաժամանակ ԼՂՀ Սահմանադրության և օրենքների նորմերին համապատասխան որոշումը չի կարող դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք հանդիսանալ:

Բարձրացված հարցի կապակցությամբ իրավակիրառ պրակտիկայում կարող են լինել տարբեր տեսակետներ և քանի դեռ չկա միջազգային պայմանագիր կամ համաձայնագիր, կամ էլ ԼՂՀ Գերագույն դատարանի, այդ հարցի կապակցությամբ օրենքի միատեսակ կիրառման վերաբերյալ, նախադեպային որոշում, տվյալ հարցը գտնվելու է օրենքի մեկնաբանության տիրույթում ու նման փաստական հանգամանքների պայմաններում գործող իրավակարգավորումների լույսի ներքո կատարված մեկնաբանությունը, դատավորին կոպիտ անփութության մեջ մեղադրելու համար որևէ կերպ չի կարող արդարացված համարվել:

Վերոգրյալներից ելնելով և ղեկավարվելով ԼՂՀ դատական օրենսգրքի 104-րդ հոդվածի 7-րդ մասով՝

### **Միջնորդում եմ**

Հիմք ընդունել իմ կողմից ներկայացված լրացուցիչ բացատրությունը և կարճել իմ նկատմամբ 2017թ. հունվարի 24-ին հարուցված կարգապահական վարույթը»:

2017թ. մարտի 10-ին Դատավոր Դ.Ավանեսյանը պատասխան է ներկայացրել արդարադատության խորհրդին՝ հետևյալ բովանդակությամբ.

«Եզրակացությունից ևս հետևում է, որ ԼՂՀ գլխավոր դատախազի հաղորդման մեջ նշված և կարգապահական վարույթ հարուցելու հիմքում դրված ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 324-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 1-ին մասի և ԼՂՀ քրեական օրենսգրքի 7-րդ ու 8-րդ հոդվածների նորմերի որևէ խախտումներ, իմ կողմից արդարադատություն իրականացնելիս, թույլ չեն տրվել, այսինքն՝ դրանք եղել են մտացածին»:

Այլ որպես իմ կողմից ենթադրաբար թույլ տրված նյութական նորմի ակնհայտ կոպիտ խախտում է նշվել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

անկախության հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ԼՂՀ Ազգային ժողովի 2016թ. օգոստոսի 25-ի թիվ Ն-098-6 որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի սխալ կիրառումը, քանի որ իմ կողմից անտեսվել է նույն որոշման 9-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված սահմանափակումը, որի արդյունքում հանցագործություն կատարած անձի նկատմամբ պատշաճ արդարադատություն չի իրականացվել, և նա ապօրինի ազատվել է պատժի կրումից:

Իմ կողմից բարձրացված իրավական հարցի կապակցությամբ արձանագրվել է, որ /.../ ԼՂՀ և ՀՀ միջև իրավական հարաբերությունների առանձնահատկություններից ելնելով ձևավորված է այն պրակտիկան, որ քրեական գործերով դատական ակտերը փոխադարձ ճանաչվում են երկու պետությունների տարածքում՝ առանց քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ճանաչման ընթացակարգ անցնելու: Նշվածը վերաբերվում է նաև քաղաքացիական և վարչական գործերով կայացված դատական ակտերին:

Չեմ կարծում, որ իրավական պետությունում անձին քրեական պատասխանատվությունից ազատելուց հրաժարվելու հիմքում կարող է դրվել իրավական հարաբերությունների առանձնահատկություններով պայմանավորված ձևավորված պրակտիկան: Նաև գտնում եմ, որ օտարերկրյա պետությունների հետ առանձնապես քրեական գործերով իրավական հարաբերությունները կարող են կարգավորվել միայն ու միայն միջպետական պայմանագրերով, հակառակ դեպքում կոպիտ կերպով կոտնահարվի ԼՂՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի, ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի, նույն օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի և «Միջազգային պայմանագրերի մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջները:

«Միջազգային պայմանագրերի մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝

1. ԼՂՀ միջպետական պայմանագրով կարող են կարգավորվել ցանկացած հարաբերություններ, որոնք համապետական նշանակություն ունեն և այդ իմաստով կարող են առնչվել ինչպես կառավարության, մեկ կամ ավելի գերատեսչության, այնպես էլ պետական այլ մարմինների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների հետ:

2. Անկախ սույն հոդվածի 1-ին մասի դրույթից, ԼՂՀ միջպետական պայմանագրով են կարգավորվում (...)

2) քաղաքացիական, ընտանեկան, քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների հաստատման, ինչպես նաև հանձնման հետ կապված հարաբերությունները. (...):

Գտնում եմ, որ որևէ իրավական հարաբերությունների առանձնահատկություններով պայմանավորված ձևավորված պրակտիկան չի կարող հակասել ԼՂՀ Սահմանադրությանը և դրա կարգավորումներին համապատասխան ընդունված օրենքներին, մասնավորապես՝ ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի և «Միջազգային պայմանագրերի մասին» ԼՂՀ օրենքի իմպերատիվ բնույթ կրող նորմերին:

Եթե առաջնորդվենք տվյալ տրամաբանությամբ, ստացվում է այնպես, որ «Միջազգային պայմանագրերի մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի իմպերատիվ բնույթ կրող դրույթները նախատեսված են հենց այնպես և որոշ դեպքերում դրանց կարելի է նաև որևէ նշանակություն չտալ:

Ի տարբերություն քաղաքացիաիրավական իրավահարաբերությունների՝ ԼՂՀ քրեական օրենսգիրքն արգելում է քրեական օրենքն անալոգիայով կիրառելը:

Փաստորեն ստացվում է այնպես, որ ես մեղադրվում եմ քրեական օրենքի անալոգիա չկիրառելու և օրենքի մեկնաբանության համար, այնինչ ԼՂՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ քրեական օրենքն անալոգիայով կիրառելն արգելվում է, իսկ ԼՂՀ դատական օրենսգրքի 101.2 հոդվածի 6-րդ մասով սահմանված է, որ արդարադատություն իրականացնե-

լիս օրենքի մեկնաբանությունը, փաստերի և ապացույցների գնահատումն ինքնին չեն կարող հանգեցնել կարգապահական պատասխանատվության:

Գտնում եմ, որ դատավորին վերագրվող խախտումը չի կարող համարվել ակնհայտ և կոպիտ, եթե այն չի պարունակում ԼՂՀ Սահմանադրության կամ օրենքների նորմերի այնպիսի էական, անվիճելի և անհերքելի խախտումներ, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել անձանց՝ վերոհիշյալ իրավական ակտերով երաշխավորված իրավունքների և ազատությունների կոպիտ սահմանափակմանը, չհիմնավորված և չպատճառաբանված որոշման կայացմանը: Հետևաբար, իրավական հարաբերությունների առանձնահատկություններով պայմանավորված ձևավորված պրակտիկային հակառակ միաժամանակ ԼՂՀ Սահմանադրության և օրենքների նորմերին համապատասխան որոշումը չի կարող դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք հանդիսանալ:

Համենայնդեպս, եզրակացության մեջ չկա որևէ նշում այն մասին, որ ես խախտել եմ ԼՂՀ Սահմանադրության կամ ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի կամ էլ ԼՂՀ քրեական օրենսգրքի որևէ նորմ:

Բարձրացված հարցի կապակցությամբ իրավակիրառ պրակտիկայում կարող են լինել տարբեր տեսակետներ և քանի դեռ չկա միջազգային պայմանագիր կամ համաձայնագիր, կամ էլ ԼՂՀ Գերագույն դատարանի այդ հարցի կապակցությամբ օրենքի միատեսակ կիրառման վերաբերյալ նախադեպային որոշում, սովյալ հարցը գտնվելու է օրենքի մեկնաբանության տիրույթում ու նման փաստական հանգամանքների պայմաններում գործող իրավակարգավորումների լույսի ներքո կատարված մեկնաբանությունը, դատավորի նկատմամբ հետապնդում իրականացնելու և կոպիտ անփութության մեջ մեղադրելու համար, որևէ կերպ չի կարող արդարացված համարվել:

ԼՂՀ արդարադատության նախարարին տված բացատրություններից անառարկելիորեն հետևում է, որ ես Համաներման որոշման 9-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված այսպես կոչված սահմանափակումը հիմք չեմ ընդունել, քանի որ իմ մոտ տեղի է ունեցել իրավական դիրքորոշման փոփոխություն և գտել եմ, որ ՀՀ դատարանների օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը ՀՀ-ի հետ միջազգային պայմանագրերի կամ համաձայնագրերի բացակայության պայմաններում չեն կարող առաջացնել այն իրավական հետևանքները, որոնք առաջացնում են ԼՂՀ դատարանների օրինական ուժի մեջ մտած դատական ակտերն, այսինքն իմ գործողությունները եղել են օրենքի մեկնաբանության տիրույթում և դրանք իրենց էությամբ կարող են գնահատվել միայն դիտավորյալ բնույթի գործողություններ, այնինչ ըստ եզրակացության ես մեղադրվում եմ կոպիտ անփութության մեջ, քանի որ չեմ կանխատեսել իմ վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև սովյալ իրադրությունում կարող էի և պարտավոր էի դա անել:

Հավելեմ նաև, որ ԸԲԴ/0101/01/16 և ԸԲԴ/0115/01/16 քրեական գործերով ևս հարցեր են առաջացել ՀՀ դատարանների օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը հիմք ընդունելու և սովյալ գործերով մեղադրվող անձանց պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք դիտարկելու, պատիժ նշանակելու հատուկ կարգ կիրառելու, ինչպես նաև վերջին գործով նաև դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու վերաբերյալ, և ես, առաջնորդվելով օրենքներն ազատորեն մեկնաբանելու իմ իրավունքից, կայացրել եմ համապատասխան որոշում դրանք չկիրառելու վերաբերյալ:

Ցանկանում եմ խորհրդի ուշադրությունը հրավիրել նաև այն հանգամանքին, որ այսպես կոչված «ինքնահոս» եղանակով ՀՀ դատարանների օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը ճանաչելու պրակտիկան, /որը որևէ կերպ չի կարող տեղավորվել գործող քրեական և քրեադատավարական օրենսդրության տրամաբանության մեջ./ իրենից ներկայացնում է նաև այնպիսի վտանգներ, ինչպիսին կարող են լինել օրինակ՝ անձը ՀՀ դատարանի կողմից դատապարտված լինել այնպիսի արարքի համար, որը ԼՂՀ քրեական օրենսգրքով, այդ արարքը կատարելու պահին, հանցագործություն չի համարվել: Օրինակները բազմաթիվ են և ես կթվարկեմ ընդամենը մի

քանիսը՝ 1/. ֆինանսական բուրգ ստեղծելը, կազմակերպելը կամ ղեկավարելը, 2/. դեղերի կլինիկական փորձարկումների արդյունքները կեղծելը կամ թաքցնելը, 3/. **նոտարի գործունեությանը միջամտելը**, 4/. նոտարի մոտ կեղծ երդում տալը և այլն: Տվյալ արարքները ՀՀ քրեական օրենսգրքով համարվում են հանցագործություններ, իսկ ԼՂՀ քրեական օրենսգիրքը նման արարքները դեռևս չի դասում հանրորեն վտանգավոր արարքների շարքին»:

2017թ. մարտի 20-ի Արդարադատության խորհրդի նիստում դատավոր Դ.Ավանեսյանը վիճարկել է կարգապահական խախտումների փաստերի առկայությունը, այնպես է ԼՂՀ արդարադատության նախարարին տված բացատրություններում և Արդարադատության խորհրդին ներկայացրած պատասխանում նշված փաստարկները:

**4. Կարգապահական պատասխանատվության հարցի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

Արդարադատության խորհուրդը հիմք է ընդունում արձանագրված հետևյալ փաստերը՝

1. ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2016թ. հուլիսի 28-ի դատավճռով Հայկ Ղարիբի Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հանցավոր արարքը կատարելու մեջ և նրա նկատմամբ նշանակվել է պատիժ՝ ազատազրկում 2(երկու) տարի 6(վեց) ամիս ժամկետով: Հ.Հակոբյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, փոխվել է կալանավորմամբ՝ մինչև նրա մասով դատավճռի կատարումը:

2. ԼՂՀ արդարադատության նախարարի 2017թ. մարտի 06-ին ներկայացրած միջնորդության կից՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի պետ Լ.Ավետիսյանի կողմից տրված 2016թ. սեպտեմբերի 01-ի թիվ Ե 40/16-Ա-183 գրության համաձայն՝ Հայկ Ղարիբի Հակոբյանը 2014թ. հունիսի 26-ին Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդվածով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով դատապարտվել է տուգանքի 1.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամի չափով:

Տուգանքի վճարումը գտնվում է կատարման փուլում:

3. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ԼՂՀ Ազգային ժողովի 2016թ. օգոստոսի 25-ի թիվ Ն-098-6 որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ պատժից ազատման ենթակա են այն անձինք, որոնց նկատմամբ նշանակվել է առավելագույնը երեք տարի ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պատիժ, բացառությամբ նույն որոշման 8-րդ կետի 4-6-րդ ենթակետերի և 9-րդ կետով նախատեսված դեպքերի:

Նույն որոշման 9-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ համաներում չի կիրառվում այն անձանց նկատմամբ, որոնք նախնական կալանքի տակ գտնվելու կամ պատիժը կրելու ընթացքում նույն որոշման կիրառման օրվա դրությամբ կարող են մեղադրվել կամ մեղադրվում են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

4. ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը 2016թ. օգոստոսի 29-ի որոշմամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ԼՂՀ Ազգային ժողովի 2016թ. օգոստոսի 25-ի թիվ Ն-098-6 որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ Հայկ Ղարիբի Հակոբյանին ազատել է Դատարանի 2016թ. հուլիսի 28-ի դատավճռով նշանակված պատժից:

5. 2016թ. սեպտեմբերի 09-ին նշված որոշման դեմ ԼՂՀ Ասկերանի շրջանի դատախազը բերել է վերաքննիչ բողոք:

6. ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017թ. փետրվարի 08-ի որոշմամբ Դատարանի ԸԻԴ 0052/01/16 քրեական գործով 2016 թվականի օգոստոսի 29-ի որոշումը՝ ԼՂՀ Ազգային ժողովի 2016թ. օգոստոսի 25-ին ընդունված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» թիվ Ն-098-6 որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ Հայկ Ղարիբի Հակոբյանին ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանի 2016 թվականի հուլիսի 28-ի դատավճռով ԼՂՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով 2/երկու/ տարի 6/վեց/ ամիս ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատժից ազատելու և նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը վերացնելու մասով բեկանվել է:

**5. Արդարադատության խորհրդի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննարկելով դատավոր Դ.Ավանեսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, լսելով ԼՂՀ արդարադատության նախարար Ա.Դանիելյանի զեկույցը, դատավորի բացատրությունը, ուսումնասիրելով վարույթի նյութերը և հետազոտելով ապացույցները՝ Արդարադատության խորհուրդը գտնում է, որ ԼՂՀ արդարադատության նախարարի միջնորդությունը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

ԼՂՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Վերոշարադրյալ սահմանադրական նորմից հետևում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն Սահմանադրությամբ, օրենքներով և դրանց հիման վրա ընդունված օրենսդրական այլ ակտերով նախատեսված գործողություններ և ձեռնպահ մնալու այդ ակտերով չնախատեսված կամ դրանց պահանջներին հակասող որևէ գործողությունից:

ԼՂՀ դատական օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ դատարանները արդարադատությունն իրականացնում են Սահմանադրության, միջազգային իրավունքի նորմերին և օրենքներին համապատասխան:

«ԼՂՀ անկախության հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ԼՂՀ Ազգային ժողովի 2016թ. օգոստոսի 25-ի թիվ Ն-098-6 որոշման /այսուհետ նաև՝ Համաներման որոշում/ 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ պատժից ազատման ենթակա են այն անձինք, որոնց նկատմամբ նշանակվել է առավելագույնը երեք տարի ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պատիժ, բացառությամբ նույն որոշման 8-րդ կետի 4-6-րդ ենթակետերի և 9-րդ կետով նախատեսված դեպքերի:

Համաներման որոշման 9-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ համաներում չկիրառել այն անձանց նկատմամբ, որոնք նախնական կալանքի տակ գտնվելու կամ պատիժը կրելու ընթացքում նույն որոշման կիրառման օրվա դրությամբ կարող են մեղադրվել կամ մեղադրվում են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Արդարադատության խորհուրդը փաստում է, որ համաներման կիրառման սահմանափակումները նախատեսված են համաներման ակտով և պետք է կատարվեն անվերապահորեն: Մասնավորապես, անվերապահորեն պետք է պահպանվեն համաներման ակտում նախատեսված այն կանոնները, որոնք սահմանում են անձանց շրջանակը, որոնց նկատմամբ համաներումը կիրառելի չէ, ինչպես նաև սահմանում են, թե հանցանք կատարած անձինք ինչ չափով պետք է օգտվեն համաներումից՝ պետք է ազատվեն քրեական պատասխանատվությունից կամ պատժից, կամ կարող է մեղմացվել պատիժը, կամ վերացվել

դատվածությունը: Նշված կանոններից դուրս համաներման կիրառումը կարող է հանգեցնել օրինականության սկզբունքի խախտման և կամայականության, առաջացնել օրենքի ոչ միատեսակ կիրառության:

Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Դատարանի 2016թ. հուլիսի 28-ի դատավճռով Հայկ Ղարիբի Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հանցավոր արարք կատարելու մեջ և նրա նկատմամբ նշանակվել է պատիժ՝ ազատազրկում 2 /երկու/ տարի 6 /վեց/ ամիս ժամկետով: Նույն դատավճռով դատավոր Դ.Ավանեսյանը փաստել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցավոր արարքը դասվում է դիտավորությամբ կատարվող միջին ծանրության հանցագործությունների շարքին և այն համապատասխանում է ԼՂՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներին: Հաշվի առնելով, որ ամբաստանյալ Հայկ Հակոբյանը դիտավորությամբ կատարված հանցագործության համար ունի դատվածություն և նույն քրեական գործով մեղադրվում է դիտավորյալ միջին ծանրության հանցագործություն կատարելու մեջ, Դատարանը գտել է, որ ամբաստանյալ Հ.Հակոբյանին մեղսագրվող արարքը ԼՂՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով ռեցիդիվ է:

Դատարանը, 2016թ. օգոստոսի 29-ի որոշմամբ, Հայկ Հակոբյանի նկատմամբ կիրառել է Համաներման որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետը և նրան ազատել Դատարանի 2016թ. հուլիսի 28-ի դատավճռով նշանակված պատժից: Դատարանի նույն որոշմամբ արձանագրվել է, որ 0052/01/2016 քրեական գործում բացակայում են Համաներման որոշման մեջ նշված սահմանափակումները, որոնք կարող են արգելք հանդիսանալ ամբաստանյալների նկատմամբ Համաներման որոշման կիրառման համար:

Դատարանի 2016թ. օգոստոսի 29-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել ԼՂՀ Ասկերանի շրջանի դատախազը: ԼՂՀ վերաքննիչ դատարանը 2017թ. փետրվարի 08-ի որոշմամբ բողոքը բավարարել է և դատական ակտը Հ.Հակոբյանին պատժից ազատելու և նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը վերացնելու մասով բեկանել՝ արձանագրելով, որ Դատարանը, Հ.Հակոբյանի նկատմամբ 2016թ. օգոստոսի 29-ին Համաներման որոշման կիրառման հարցը քննություն առնելու մասին որոշում է կայացրել Համաներման որոշման 9-րդ կետի 3-րդ ենթակետի խախտմամբ և 29.08.2016թ. որոշումը Հ.Հակոբյանի մասով բեկանել:

Հիմք ընդունելով վերոնշյալ փաստերը, Արդարադատության խորհուրդը արձանագրում է, որ դատավոր Դ.Ավանեսյանը Համաներման որոշմամբ նախատեսված սահմանափակումներն անտեսելու հետևանքով խախտել է համաներմում կիրառելու կարգը, քանի որ Համաներման որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետը Հ.Հակոբյանի նկատմամբ կիրառելի չէր նույն որոշման 9-րդ կետի 3-րդ ենթակետի ուժով: Հետևաբար, Հ.Հակոբյանը ենթակա չէր պատժից ազատման:

Արդարադատության խորհուրդն արձանագրում է, որ դատավոր Դ.Ավանեսյանը Համաներման որոշումը դատապարտյալ Հ.Հակոբյանի նկատմամբ կիրառելիս թույլ է տվել նյութական նորմի ակնհայտ և կոպիտ խախտում:

ԼՂՀ դատական օրենսգրքի 101-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է արդարադատություն իրականացնելիս նյութական նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը, որը կատարվել է չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ:

«Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 87-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

Նույն օրենքի 44-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ էթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է:

Եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն ստորակետերով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է:

Վերոշարադրյալից հետևում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է, որ վերջինիս կողմից թույլ տված խախտումը լինի ակնհայտ և կոպիտ, կատարված լինի չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ, այսինքն՝ դատավորի կողմից թույլ տված ցանկացած խախտում չէ, որ կարող է հանգեցնել կարգապահական պատասխանատվության, այլ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ են թվարկված վավերապայմանների միաժամանակյա առկայությունը:

Սույն կարգապահական վարույթը հարուցվել է ԼՂՀ արդարադատության նախարարի կողմից դատավորի կողմից նյութական նորմի ակնհայտ և կոպիտ խախտում թույլ տալու հիմքով: Արդարադատության խորհուրդը գտնում է, որ այն դեպքում, երբ կարգապահական պատասխանատվության համար հիմք են հանդիսանում դատավորի կողմից նյութական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումները, որոնց առկայությունը ապացուցվում է կարգապահական պատասխանատվության գործի քննությամբ, Արդարադատության խորհուրդը ելնում է դատավորի մեղավորության կանխավարկածից, քանի որ դատական ակտերը, որոնք պարունակում են դատավարական կամ նյութական օրենքի նորմերի խախտումներ, չեն կարող կայացվել դատավորի մեղքի բացակայությամբ և ենթադրում են մեղքի որևէ տեսակի առկայություն:

Այսպիսով, Արդարադատության խորհուրդը գտնում է, որ Դատարանի դատավոր Դ.Ավանեսյանը դատապարտյալ Հայկ Հակոբյանի նկատմամբ կիրառելով Համաներման որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետը և անտեսելով նույն որոշման 9-րդ կետի 3-րդ ենթակետը, թույլ է տվել նյութական նորմերի այնպիսի խախտումներ, որոնց առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով: Նշված խախտումները ԼՂՀ դատական օրենսգրքի 101-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ուժով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք են հանդիսանում:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ դատական օրենսգրքի 81-րդ, 105-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 109-րդ և 111-րդ հոդվածներով, Արդարադատության խորհուրդը՝

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. ԼՂՀ արդարադատության նախարարի միջնորդությունը բավարարել: ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավոր **Դավիթ Ավանեսյանին** հայտարարել նախազգուշացում:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն

Մ.ԱՎԱՆԵՍՅԱՆ  
Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ  
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ  
Ա.ԼԱԶԱՐՅԱՆ  
Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆ  
Շ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ  
Վ.ՄԱՂՅԱՆ  
Ա.ՍԱՌԱԶՅԱՆ  
Մ.ՄՏԵՓԱՆՅԱՆ

## ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Դատական օրենսգրքի 101 հոդվածի համաձայն՝ «1. Դատավորին կարգապահական պատասխանատվության է ենթարկում Արդարադատության խորհուրդը: 2. Դատավորի կարգապահական պատասխանատվության հիմքերն են՝ 1) արդարադատությունն իրականացնելիս նյութական նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը, որը կատարվել է չարամտորեն կամ կոպիտ անփութությամբ...»:

«Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 44-րդ հոդվածի կանոններին համապատասխան վերը վկայակոչած նորմի մեկնաբանության արդյունքում ակնհայտ է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար պարտադիր պայման է գործում՝ թույլ տրված խախտումը լինի ակնհայտ և կոպիտ, այսինքն՝ այդ երկու հանգամանքը պետք է պարտադիր առկա լինի, իսկ ակնհայտ և կոպիտ խախտումը պետք է կատարված լինի կամ չարամտորեն, կամ կոպիտ անփութությամբ:

Դատական օրենսգրքի 101.2 հոդվածում տրված է ակնհայտ և կոպիտ խախտումների, խախտման չարամտության, կոպիտ անփութության հասկացությունները, ըստ որի՝ 1. ակնհայտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի այն խախտումը, որի առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով: 2. Կոպիտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի այն խախտումը, որը հեղինակագրկում է արդարադատությունը կամ անհամատեղելի է դատավորի բարձր կոչման հետ: 3. Կոպիտ է նաև պարբերաբար կատարված այն խախտումը, որը, առանձին վերցրած, կարող է այդպիսին չհամարվել, սակայն իր պարբերականությամբ հեղինակագրկում է արդարադատությունը կամ դատավորի բարձր կոչումը: 4. Նյութական կամ դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը կատարված է չարամտությամբ, եթե դատավորը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը: 5. Նյութական կամ դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը կատարված է կոպիտ անփութությամբ, եթե դատավորը չի կանխատեսել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում կարող էր և պարտավոր էր դա անել:

ԼՂՀ Արդարադատության նախարարի եզրակացության համաձայն՝ դատավոր Դ.Ավանեսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել ԼՂՀ գլխավոր դատախազի հաղորդումը:

Իսկ կարգապահական վարույթ հարուցվել է այն բանի համար, որ արդարադատություն իրականացնելիս ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Դավիթ Ավանեսյանը (այսուհետ նաև՝ Դատարան) «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ԼՂՀ Ազգային ժողովի 2016թ. օգոստոսի 25-ի թիվ Ն-098-6 որոշումը սխալ կիրառելով և Հայկ Հակոբյանին Դատարանի 2016թ. հուլիսի 28-ի դատավճռով նշանակված պատժից ազատելով, թույլ է տվել նյութական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտում. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ԼՂՀ Ազգային ժողովի 2016թ. օգոստոսի 25-ի թիվ Ն-098-6 որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի՝ պատժից ազատման են ենթակա, բացառությամբ նույն որոշման 8-րդ կետի 4-6-րդ ենթակետերի և 9-րդ կետով նախատեսված դեպքերի՝ այն անձինք, որոնց նկատմամբ նշանակվել է առավելագույնը երեք տարի ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պատիժ: Նույն որոշման 9-րդ կետի 3-րդ ենթակետը սահմանում է, որ՝ «Համաներումը չկիրառել՝ ...3) այն անձանց նկատմամբ, որոնք նախնական կալանքի տակ գտնվելու կամ պատիժը կրելու ընթացքում սույն որոշման կիրառման օրվա դրությամբ կարող են մեղադրվել կամ մեղադրվում են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու մեջ



կամ դատապարտվել են կրկին դիտավորյալ հանցագործության կատարման համար...»: Դատարանի 28.07.2016թ. դատավճռից և ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի պետի 01.09.2016թ. թիվ Ե 40/16-Ա-183 գրույթունից համաներման ակտի կիրառման օրվա դրությամբ Հայկ Հակոբյանը համարվում էր նախկինում դիտավորյալ հանցագործություն կատարելու համար պատիժ կրող անձ և ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 28.07.2016թ. դատավճռով դատապարտված էր կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար: Դատավորն անտեսել է համաներմում կիրառելու վերը նշված հստակ սահմանափակումը, և Դատարանի 2016թ. օգոստոսի 29-ի որոշմամբ Հայկ Ղարիբի Հակոբյանն ազատվել է Դատարանի 2016թ. հուլիսի 28-ի դատավճռով նշանակված պատժից, հանցագործություն կատարած անձի նկատմամբ պատշաճ արդարադատություն չի իրականացվել, և նա ապօրինի ազատվել է պատժի կրումից և արդարացի հատուցում չի ստացել իր կատարած արարքի համար:

Կարգապահական վարույթի հանգամանքները հետևյալն են.

1. ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (դատավոր Դ.Ավանեսյան) 28.07.2016թ. դատավճռով Հայկ Ղարիբի Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված հանցավոր արարքը կատարելու մեջ և նրա նկատմամբ նշանակվել է պատիժ՝ ազատազրկում 2(երկու) տարի 6(վեց) ամիս ժամկետով: Հայկ Ղարիբի Հակոբյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, փոխվել է կալանավորմամբ՝ մինչև նրա մասով դատավճռի կատարումը:

Ըստ դատավճռի՝ «...ամբաստանյալ Հայկ Հակոբյանը ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2014թ. հունիսի 26-ի դատավճռով իր նկատմամբ տուգանքի ձևով նշանակված պատիժը չի կրել, ...»: Դատարանը նաև փաստել է, որ «ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցավոր արարքը դասվում է դիտավորությամբ կատարվող միջին ծանրության հանցագործությունների շարքին և այն համապատասխանում է ԼՂՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներին: Այսպիսով, հաշվի առնելով, որ ամբաստանյալ Հայկ Հակոբյանը դիտավորությամբ կատարված հանցագործության համար ունի դատվածություն և սույն քրեական գործով մեղադրվում է դիտավորյալ միջին ծանրության հանցագործություն կատարելու մեջ, Դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Հայկ Հակոբյանին մեղսագրվող արարքը ԼՂՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով ռեցիդիվ է»:

2. Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի պետ Լ.Ավետիսյանի 01.09.2016թ. թիվ Ե 40/16-Ա-183 գրության՝ Հայկ Հակոբյանի նկատմամբ ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի ՏԴ/0035/01/14 քրեական գործով 26.06.2014թ. դատավճռով որպես պատիժ նշանակված 1.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամի չափով տուգանքից վերջինս վճարել է միայն 100.000 ՀՀ դրամ և տուգանքը գտնվում է կատարման փուլում:

3. ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, 2016թ. օգոստոսի 29-ի որոշմամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներմում հայտարարելու մասին» ԼՂՀ Ազգային ժողովի 2016թ. օգոստոսի 25-ի թիվ Ն-098-6 որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ Հայկ Ղարիբի Հակոբյանին ազատել է Դատարանի 2016թ. հուլիսի 28-ի դատավճռով նշանակված պատժից:

Դատարանի որոշմամբ արձանագրվել է, որ «...սույն քրեական գործում բացակայում են Համաներման որոշման մեջ նշված այն սահմանափակումներն, որոնք կարող են արգելք հանդիսանալ ամբաստանյալների նկատմամբ Համաներման որոշման կիրառման համար»:

4. 2016թ. սեպտեմբերի 9-ին նշված որոշման դեմ ԼՂՀ Ասկերանի շրջանի դատախազը բերել է վերաքննիչ բողոք:

5. Վերաքննիչ դատարանը 2016թ. դեկտեմբերի 13-ին կայացրել է ամբաստանյալ Հ.Հակոբյանի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին որոշում, իսկ նույն օրը՝ մեկ այլ որոշմամբ, ԸԻԴ 0052/01/16 քրեական գործի վարույթը՝ ամբաստանյալ Հ.Հակոբյանի մասով, կասեցվել է՝ մինչև կասեցնելու հիմք ծառայած հանգամանքների վերանալը:

6. 2017թ. փետրվարի 3-ին Վերաքննիչ դատարան է մուտք գործել ԼՂՀ Ասկերանի շրջանի դատախազության 2017թ. փետրվարի 3-ի թիվ 151014.16 գրությունը, ըստ որի՝ սույն քրեական գործով հետախուզման մեջ գտնվող ամբաստանյալ Հայկ Ղարիբի Հակոբյանը հայտնաբերվել և 2017թ. հունվարի 31-ին ձերբակալվել է:

7. ԼՂՀ վերաքննիչ դատարանի 08.02.2017թ. որոշմամբ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի ԸԻԴ 0052/01/16 քրեական գործով 2016 թվականի օգոստոսի 29-ի որոշումը՝ ԼՂՀ Ազգային ժողովի 2016թ. օգոստոսի 25-ին ընդունված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» թիվ Ն-098-6 որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի կիրառմամբ Հայկ Ղարիբի Հակոբյանին ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2016 թվականի հուլիսի 28-ի դատավճռով ԼՂՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով 2/երկու/ տարի 6/վեց/ ամիս ժամկետով ազատազրկման ձևով նշանակված պատժից ազատելու և նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը վերացնելու մասով բեկանվել է:

Վերաքննիչ դատարանը մասնավորապես արձանագրել է, որ «Դատարանը, Հայկ Հակոբյանի նկատմամբ 2016թ. օգոստոսի 29-ին «Համաներման ակտի կիրառման հարցը քննության առնելու մասին» որոշում է կայացրել Համաներման որոշման 9-րդ կետի 3-րդ ենթակետի խախտմամբ, ուստի, նշված որոշումը՝ Հայկ Հակոբյանի մասով, ենթակա է բեկանման»:

8. Սույն հարուցված կարգապահական վարույթում բացակայում է որոշում՝ ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2014թ. հունիսի 26-ի դատավճիռը ճանաչելու մասին:

Դատավոր Դ.Ավանեսյանն իր բացատրություններում նշել է, որ Հայկ Հակոբյանի նկատմամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակման 25-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ԼՂՀ Ազգային ժողովի 2016թ. օգոստոսի 25-ի թիվ Ն-098-6 որոշումը կիրառելիս հաշվի չի առել ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2014թ. հունիսի 26-ի դատավճռով դիտավորյալ հանցագործության համար դատապարտված լինելու փաստը՝ ԼՂՀ դատարանի կողմից այդ դատավճիռը որոշակի ընթացակարգի շրջանակներում չճանաչված լինելու հանգամանքով պայմանավորված, վկայակոչելով ստորև նշված իրավական նորմերը:

ԼՂՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ «1. Արցախի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություն է»:

Քրեական դատավարության օրենսգրքի 529 հոդվածի համաձայն՝ «1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա պետությունների դատարանների դատավճիռները ենթակա են ճանաչման Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում: 2. Օտարերկրյա պետությունների դատարանների դատավճիռների՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ճանաչելու հիմքերը, ճանաչման ենթակա դատավճիռների (որոշումների) տեսակները սահմանվում են տվյալ պետության հետ կնքված կամ նրա մասնակցությամբ գործող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրով»:

Նույն օրենսգրքի 531 հոդվածի համաձայն՝ «Օտարերկրյա պետության դատարանի դատավճռի ճանաչումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

տարածքում առաջացնում է նույն իրավաբանական հետևանքները, ինչ կառաջացնեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը»:

Սույն հարուցված կարգապահական վարույթում բացակայում է որոշում՝ ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2014թ. հունիսի 26-ի դատավճիռը ճանաչելու մասին:

Դատական օրենսգրքի 101 հոդվածի վեցերորդ մասի համաձայն՝ Արդարադատություն իրականացնելիս օրենքի մեկնաբանությունը, փաստերի և ապացույցների գնահատումն ինքնին չեն կարող հանգեցնել կարգապահական պատասխանատվության:

Վերը նշվածների լույսի ներքո գտնում ենք, որ դատավորի գործողությունները և դրա վերաբերյալ տրված բացատրությունները, ոչ միայն իրավական ենթադրություն են պարունակում, այլև իրավաչափ են, ինչն էլ բավարար է հանգելու այն եզրակացության, որ բացակայում է դատավորի կողմից նյութական իրավունքի ակնհայտ և կոպիտ խախտման փաստը, որն էլ իր հերթին բերում է նրան, որ բացակայում են նաև Դատական օրենսգրքի 101 հոդվածում նշված դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար նախատեսված հիմքերը:

Նշվածները թույլ են տալիս անհամաձայնություն հայտնել դատավոր Դ.Ավանեսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման վերաբերյալ:

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

**ստորագրություն  
ստորագրություն**

**Մ.ԱՎԱՆԵՍՅԱՆ  
Մ.ՍՏԵՓԱՆՅԱՆ**

**20.03.2017թ.**



Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքերով:

Ըստ բողոքաբերի խախտվել են ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի, 230-231-րդ հոդվածների պահանջները, ինչպես նաև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 1-ին, 4-րդ, 5-րդ և 43-րդ հոդվածների պահանջները:

Վճռաբեկ բողոքի *առաջին հիմքը* հետևյալն է՝ սույն գործը ենթակա էր քննություն վարչական դատավարության, այլ ոչ թե քաղաքացիական դատավարության կարգով:

Պատճառաբանելով այդ պնդումը, բողոքաբերը նշել է, որ համաձայն չէ Վերաքննիչ դատարանի այն եզրահանգմանը, որ հարուցված կատարողական վարույթի շրջանակներում ծառայության հարկադիր կատարողի ընդունած որոշման հիման վրա գույքի վրա դրված արգելանքը վերացնելու մասին պահանջը ենթակա է քննության քաղաքացիական դատավարության կարգով, քանի որ գույքի վրա արգելանք դնելու մասին որոշումը չի կարող դասվել հանրային իրավահարաբերություններից ծագող գործերի շարքին:

Ըստ բողոքաբերի, Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները հակասում են ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին, 3-րդ հոդվածների, ինչպես նաև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼՂՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների պահանջներին, որոնց վերլուծություններից հետևում է, որ հարկադիր կատարողի գործողությունները պետք է դիտվեն որպես պետական մարմնի պաշտոնատար անձի կողմից իրականացվող գործողություններ, որոնք կարող են վիճարկվել, քննվել և լուծվել միայն վարչական դատավարության կարգով:

Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները և գործի վարույթը կարճելու փոխարեն կայացրել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

Վճռաբեկ բողոքի *երկրորդ հիմքը* վերաբերում է այն հարցին, թե արդյոք գույքի վրա արգելանքը /բռնագանձումը/ տարածվում է այն չափով, որն անհրաժեշտ է կատարողական թերթի պահանջների կատարման համար:

Նշվածի վերաբերյալ բողոքաբերը նշել է, որ համաձայն չէ Վերաքննիչ դատարանի եզրահանգման հետ, և այն չի բխում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼՂՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներից, որոնց վերլուծությունից հետևում է, որ բռնագանձումը տարածվում է այն չափով, որն անհրաժեշտ է կատարողական թերթի պահանջների կատարման համար, ներառյալ կատարողական ծախսերը: Այսինքն արգելադրված գույքով պետք է ապահովվի կատարողական թերթի պահանջները, այլ ոչ թե կատարողական թերթում նշված գումարի չափով, ինչն ըստ էության այլ բաներ են:

Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ հարկադիր կատարողը կարող է գույքի վրա արգելանք դնել միայն գույքի իրացման կամ մեկնարկային գնի գրոյացման դեպքում, պատճառաբանված չէ: Իսկ Վերաքննիչ դատարանի կողմից Դատարանի վճիռը ուժի մեջ թողնելը և արգելադրված գույքը արգելանքից հանելը կոժվարացնի կատարողական թերթի պահանջների կատարումը:

Նշվածներից ելնելով, բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը պատճառաբանված չէ, ինչը հակասում է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230-րդ և 231-րդ հոդվածների պահանջներին: Բացի այդ, բողոքարկվող դատական ակտը կայացնելիս ճիշտ չեն գնահատվել գործում առկա ապացույցները և ճիշտ չեն կիրառվել իրավանորմերը:

Արդյունքում, ըստ բողոքաբերի, Վերաքննիչ դատարանը հանգել է ոչ ճիշտ եզրահանգման և դատավարական իրավունքի նորմերի խախտման արդյունքում թույլ է տրվել առերևույթ դատական սխալ, որն ազդել է գործի ելքի վրա:

Բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2016թ. դեկտեմբերի 14-ի որոշումը և գործի վարույթը կարճել, կամ փոփոխել՝ «Սֆինկս» ՓԲԸ-ի հայցը ամբողջությամբ մերժել՝ որպես անհիմն:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Առաջին ատյանի դատարանի 2015թ. հունիսի 30-ի վճռով «Սասուն» ՓԲԸ-ի հայցապահանջն ամբողջությամբ բավարարվել է: Վճռվել է «Սֆինկս» ՓԲԸ-ից հոգուտ «Սասուն» ՓԲԸ-ի բռնագանձել 8.815.695 ՀՀ դրամ և 176.314 ՀՀ դրամ մուծված պետական տուրքը /գ.թ.10-11/:

2. ԼՂՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության կողմից 2015թ. օգոստոսի 6-ին հարուցվել է կատարողական վարույթ՝ «Սֆինկս» ՓԲԸ-ից հոգուտ «Սասուն» ՓԲԸ-ի 8.992.009 ՀՀ դրամ և 449.600 ՀՀ դրամ /որպես կատարողական գործողությունների կատարման ծախս/ բռնագանձելու մասին: Նույն օրն արգելանք է դրվել «Սֆինկս» ՓԲԸ-ին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա /գ.թ.12-14/:

3. ԼՂՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության 2015թ. հոկտեմբերի 6-ի որոշմամբ արգելանք է դրվել «Սֆինկս» ՓԲԸ-ին պատկանող հետևյալ շինարարական տեխնիկայի վրա. 1) SO-1224 մակնիշի 0079 HO համարանիշի խողովակադիր մեքենայի, 2) SO-1224 մակնիշի 0081 HO համարանիշի խողովակադիր մեքենայի, 3) SO-1224 մակնիշի 0082 HO համարանիշի խողովակադիր մեքենայի, 4) «ԷՕ-4124» մակնիշի 0009 HO համարանիշի էքսկավատորի, 5) «ԷՕ-3322» մակնիշի 0549 HK համարանիշի էքսկավատորի, 6) «ԷՕ-2621» մակնիշի 0065 HO համարանիշի էքսկավատորի, 7) «428 E» մակնիշի 1194 OS համարանիշի էքսկավատոր ամբարձիչի /գ.թ.15/:

4. Հայցադիմումը ներկայացվել է «Սֆինկս» ՓԲԸ-ին պատկանող դրամական միջոցների և «ԷՕ-4124» մակնիշի 0009 HO համարանիշի, «ԷՕ-3322» մակնիշի 0549 HK համարանիշի, «ԷՕ-2621» մակնիշի 0065 HO համարանիշի, «428 E» մակնիշի 1194 OS համարանիշի էքսկավատորների վերաբերյալ կիրառված արգելանքը վերացնելու մասին /գ.թ. 4-5/:

### **4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Գերագույն դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում անդրադառնալով բողոքի *առաջին հիմքին* Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ իրավական հարցադրմանը. ԼՂՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության որոշման հիման վրա արգելանքի տակ գտնվող գույքը դատական կարգով արգելանքից հանելու հայցը պետք է քննվի քաղաքացիական, թե վարչական դատավարության կարգով:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական բոլոր գործերն ընդդատյա են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածը կարգավորում է գործերի առարկայական ընդդատությունը: Նշված հոդվածի առաջին մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը...: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա չեն Գերագույն դատարանի ենթակայությանը վերապահված սահմանադրական գործերը, քրեական վարույթի

ընթացքում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, սնանկության վարույթում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼՂՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշման պատճենը, ոչ ուշ, քան որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, պատշաճ ձևով ուղարկվում է պահանջատիրոջը և պարտապանին, ինչպես նաև նույն օրենքով նախատեսված այլ անձանց և մարմիններ: Հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ կատարողական գործողությունների ընթացքում հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել առաջին ատյանի դատարան կամ վերադատության կարգով՝ որոշումը ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշումները վերացվում կամ փոփոխվում են դատարանի վճռի հիման վրա կամ հարկադիր կատարողի վերադասի կողմից:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼՂՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-4-րդ մասերի համաձայն՝ պարտապանի գույքի վրա բռնագանձումը տարածվում է այն չափով, որն անհրաժեշտ է կատարողական թերթի պահանջների կատարման համար, ներառյալ՝ կատարման ծախսերը: Կատարողական թերթով բռնագանձումն առաջին հերթին տարածվում է պարտապանի դրամական միջոցների վրա: ...Պարտապանի գույքի վրա բռնագանձումը տարածվում է հետևյալ հերթականությամբ. 1) պարտապան իրավաբանական անձի պարագայում՝ ա) արտադրության մեջ անմիջականորեն չներգրավված հիմնական միջոցներ, բ) պատրաստի արտադրանք, գ) անավարտ արտադրանք, այդ թվում՝ հումք, նյութեր, կիսաֆաբրիկատներ, դ) այլ գույք (այդ թվում՝ անշարժ գույք) ... :

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼՂՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում շահագրգիռ անձն իրավունք ունի գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով դիմել առաջին ատյանի դատարան: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայցը կարող է ներկայացնել ինչպես այդ գույքի սեփականատերը, այնպես էլ դրա օրինական տիրապետողը:

Նշված իրավական նորմերից հետևում է, որ կատարողական գործողությունների ընթացքում հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել առաջին ատյանի դատարան կամ վերադատության կարգով: Ընդ որում *պահանջատերը և պարտապանը* հարկադիր կատարողի գործողությունները /որոշումները/ կարող են բողոքարկել ինչպես վերադատության կարգով, այնպես էլ առաջին ատյանի դատարան: Իսկ արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում *շահագրգիռ անձն* իրավունք ունի միայն դիմել առաջին ատյանի դատարան՝ գույքի պատկանելիության հարցը որոշելու և այն արգելանքից հանելու վերաբերյալ հայցով:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼՂՀ օրենքով հստակեցված չէ թե հարկադիր կատարողի գործողությունները /որոշումները/ վարչական թե քաղաքացիական դատավարության կարգով պետք է առաջին ատյանի դատարանում բողոքարկվեն և քննվեն, ուստի նման գործերով առկա է միասնական դատական պրակտիկա ձևավորելու անհրաժեշտություն:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼՂՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը /այսուհետ՝ հարկադիր կատարման ծառայություն/ ապահովում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով նախատեսված դատական ակտերի հարկադիր կատարումը: Հարկադիր կատարման ծառայությունը պետական ծառայության հատուկ

տեսակ է, որի առանձնահատկությունները սահմանվում են նույն օրենքով: Հարկադիր կատարման ծառայությունում ծառայող քաղաքացին պետական ծառայող է:

«Վարչական հիմունքների և վարչական վարույթի մասին» ԼՂՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Վարչական ակտը կարող է ուղղված լինել նաև որոշակի անհատական չափանիշներով առանձնացված անձանց որևէ խմբի:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցադիմումը ներկայացրել է պարտապան «Մֆինկա» ՓԲԸ տնօրենն ընդդեմ ԼՂՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության՝ հարկադիր կատարողի որոշմամբ գույքի վրա դրված արգելանքը մասնակի վերացնելու պահանջով: Սյսինքն հայցվոր կողմը /պարտապանը/, ըստ էության, վիճարկել է գույքը հարկադիր կատարողի կողմից արգելանքի տակ դնելու գործողության իրավաչափությունը:

Առաջին ատյանի դատարանը սույն գործը քննել է քաղաքացիական դատավարության կարգով և հայցը մասնակիորեն բավարարել: Վերաքննիչ դատարանը, մերժելով վերաքննիչ բողոքը, նշել է, որ կատարողական վարույթի շրջանակներում ԴԱՀԿ ծառայության հարկադիր կատարողի ընդունած որոշման հիման վրա դրված արգելանքը վերացնելու մասին պահանջը ենթակա է քննության քաղաքացիական դատավարության կարգով:

Մինչդեռ, վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ հարկադիր կատարողի կողմից գույքն արգելանքի տակ դնելն իրենից ներկայացնում է պետական ծառայողի կողմից դատական ակտի հարկադիր կատարման հանրային իրավական գործառնության իրականացմանն ուղղված գործողություն: Ընդ որում, այդ գործողության իրականացման ընթացքում ծագում են հանրային իրավահարաբերություններ՝ կապված դատական ակտի հարկադիր կատարման ապահովման պետության պարտականության կատարման հետ: Հետևաբար, դատական ակտերի հարկադիր կատարողի ի պաշտոնե գործողության վիճարկման պահանջը չի կարող համարվել քաղաքացիական դատավարության կարգով քննարկման ենթակա վեճ: Սույն գործով ներկայացված հայցապահանջի հիմքում ընկած վիճելի իրավահարաբերությունը կրում է հանրային իրավական բնույթ՝ ըստ էության վիճարկվել է վարչական ակտ հանդիսացող որոշումը, ինչը նշանակում է, որ ըստ առարկայական ընդդատության այն ենթակա է քննության վարչական դատավարության ընթացակարգով:

Մինևս ժամանակ, Գերագույն դատարանն արձանագրում է, որ ի տարբերություն վարույթի կողմերի /պահանջատերի և պարտապանի/, ովքեր իրավունք ունեն բողոքարկելու հարկադիր կատարողի գործողությունները /որոշումները/ ինչպես վերադատության, այնպես էլ դատական /վարչական դատավարության/ կարգով, կատարողական վարույթի կողմ չհանդիսացող շահագրգիռ անձինք արգելանքի տակ գտնվող գույքի **պատկանելության վերաբերյալ վեճ ծագելու դեպքում** իրավունք ունեն դիմել դատարան՝ քաղաքացիական դատավարության կարգով:

Գերագույն դատարանի նշված եզրակացությունը բխում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼՂՀ օրենքի 28-րդ և 45-րդ հոդվածների պահանջների ու վերը նշված այլ իրավական նորմերի վերլուծությունից, ինչպես նաև այն հանգամանքից, որ արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելության վերաբերյալ վեճի պարագայում հիմնական պահանջը վերաբերում է գույքի սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի իրավունքների ճանաչմանը, այսինքն ենթադրում է



համապատասխան հիմնական պահանջի քննությունը քաղաքացիական դատավարության կարգով:

Հաշվի առնելով, որ սույն գործով վեճը ենթակա էր քննության վարչական դատավարության կարգով, ուստի ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, սույն քաղաքացիական գործի վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով այն հանգամանքից, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները վերոնշյալ իրավական հարցի վերաբերյալ անհիմն են, իսկ վճռաբեկ բողոքի առաջին հիմքը հիմնավոր է և սույն քաղաքացիական գործի վարույթը ենթակա է կարճման, ուստի Գերագույն դատարանը վճռաբեկ բողոքի *երկրորդ հիմքին* չի անդրադառնում:

Գերագույն դատարանը հարկ է համարում անդրադառնալ Վերաքննիչ դատարանի այն հիմնավորմանը, որ ԸԻԴ 185/հդ/15թ. քաղաքացիական նյութով Գերագույն դատարանը 2015թ. ապրիլի 3-ի որոշմամբ չի արձանագրել, որ ֆիզիկական անձի կողմից ընդդեմ ԴԱՀԿ ծառայության ներկայացված պահանջը պետք է քննվի ոչ թե քաղաքացիական այլ վարչական դատավարության կարգով: Գերագույն դատարանն այդ պատճառաբանությունը նույնպես անհիմն է համարում, քանի որ սույն գործի և վկայակոչած նյութի փաստական հանգամանքները տարբեր են և նշված քաղաքացիական նյութով վեճը վերաբերում էր արգելանքի տակ գտնվող գույքի պատկանելությանը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Գերագույն դատարանը համարում է բավարար՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ և 241-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և քաղաքացիական գործի վարույթը կարճելու համար:

Միաժամանակ Գերագույն դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն ամբողջությամբ բեկանելու և գործի վարույթը կարճելու լիազորությունը, քանի որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ԼՂՀ Սահմանադրությամբ ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, և գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Անդրադառնալով *դատական ծախսերի* բաշխման հարցին, Գերագույն դատարանն արձանագրում է հետևյալը.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

«Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի «գ» և «ե» կետերի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ՝ գ) տվյալ գործով վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու դեպքում, եթե գործը ենթակա չէ դատարանում քննության, կամ, եթե հայցվորի կողմից չի պահպանվել տվյալ կատեգորիայի գործի համար վեճը լուծելու սահմանված նախնական արտադատարանական կարգը ..., ե) գույքն արգելանքից ազատելու մասին հայցը բավարարելու դեպքում ... :

Սույն գործով դատական ծախսերը կազմված են միայն պետական տուրքից և նկատի ունենալով, որ վերաքննիչ բողոքի համար բողոքաբերը որպես պետական տուրք 15.11.2016թ. վճարել է 10.000 ՀՀ դրամ, իսկ վճռաբեկ բողոքի համար 13.01.2017թ.՝ 20.000 ՀՀ դրամ, հաշվի առնելով, որ քաղաքացիական գործով վարույթը ենթակա է կարճման, Գերագույն դատարանը գտնում է, որ «Մասուն» ՓԲԸ-ի կողմից վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար վճարված պետական տուրքի գումարները ենթակա են վերադարձման:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատա-  
վարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Մասուն» ՓԲԸ ներկայացուցիչ Ժ.Շահջահանյանի վճռաբեկ բողոքը  
բավարարել: ԸԻԴ 1937/02/16 քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ  
դատարանի 2016թ. դեկտեմբերի 14-ի որոշումն ամբողջությամբ բեկանել և  
գործի վարույթը կարճել:

2. «Մասուն» ՓԲԸ կողմից վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար  
«Արցախբանկ» ՓԲԸ՝ համապատասխանաբար 10.000 և 20.000 ՀՀ դրամ  
վճարված պետական տուրքը վերադարձնել:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում  
հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝	<u>ստորագրություն</u>	Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝	<u>ստորագրություն</u>	Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ